«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ

ԱՊՐԻԼԻ 05, 2008, ԹԻՎ 568

"ΧΑΪΑΣΤΑΝ". ΕΚΔΟΣΗ ΤΟΥ ΚΟΙΝΩΝΙΚΟΥ ΠΟΛΙΤΙΣΤΙΚΟΥ ΚΕΝΤΡΟΥ "ΑΡΜΕΝΙΑ"

16-Ը ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ, 14-Ը ՀՐԱԺԱՐՎԵԼ

«PANORAMA.COM», 03.04.08: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում 03.04.2008թ. ժամը 14:00-ի դրությամբ հացադուլ հայտարարելու վերաբերյալ առկա է 16, իսկ դրանից հրաժարվելու՝ 14 դիմում: Այս մասին տեղեկացնում է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի մամուլի քարտուղար Արսեն Բաբայանը:

Ըստ տեղեկատվության, հացադուլ հայտարարածներն են.

շար՝ էջ 6

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ

«ԼՐԱԳԻՐ», 02.04.08: Ապրիլի 2-ին հայտարարություն է տարածել Մտավորականների ֆորումի Ավագանին. «Ապրիլի 9-ին մարտի 1-ի զոհվածների 40-րդ օրն է:

Մենք, զերծ մնալով երկրում ստեղծված իրավիճակի քաղաքական գնահատականը տալուց, հանրության ուշադրությունն ենք հրավիրում երեւույթի բարոյական կողմի վրա:

Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթներով մահվան 40-րդ օրը նշվում է սգի օր: Հայաստանի մտավորականների ֆորումի Ավագանին դիմում է իշխանություններին՝ ձեռնպահ մնալ ապրիլի 9-ին ամեն տեսակի հանդիսավոր արարողություններից, քանի որ դրանք ժողովրդի կողմից կդիտվեն որպես սրբապղծություն, անարգանք նահատակների հիշատակին, ինչն էլ ավելի կսրի առանց այդ էլ ծայրահեղ լարված վիճակը»:

Գ. Ջհանգիրյանը հերքում է իշխանությունների հետ համաձայնության գալու մեղադրանքը

էջ 5

ԲԱՔՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ՝ ՊԱՅՄԱՆՈՎ

Պաշտոնական Բաքուն առաջարկում է քննարկել Լաչինի միջանցքը համատեղ օգտագործելու հնարավորությունը: Այս մասին, ANS հեռուստաալիքի հաղորդմամբ, հայտարարել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը:

Նշելով, որ այս միջանցքը մեծ կարեւորություն ունի, ինչպես, Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի համար, փոխնախարարը ընդգծել է, որ պաշտոնական Բաքուն առաջարկում է հետագայում միջանցքը համատեղ օգտագործել այն պայմանով, որ միջանցքը մնա Ադրբեջանի կազմում:

Ա. Ազիմովի խոսքով, այդ մասին տեղյակ են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ այս հարցը կարող է դառնալ հետագա քննարկումների առարկա: Լաչինի միջանցքը միակ ճանապարհն է, որը Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը կապում է Հայաստանի, իսկ սրա միջոցով՝ արտաքին աշխարհի հետ:

Լաչինի միջանցքի ազատագրման օպերացիան տեղի է ունեցել 1992 թվականի մայիսի 17-18-ը: Տարբեր աղբյուրների համաձայն, հակառակորդի առաջխաղացումը՝ Ստեփանակերտի շրջաններ կասեցնելուց եւ Շուշիի ազատագրումից հետո Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերը օպերացիա անցկացրեցին օպերատիվ ռազմական եւ կենսական նշանակություն ունեցող Շուշի-Լաչին-Զաբուխ ճանապարհի բացման համար: Մայիսի 18-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը մտան Լաչին, այնուհետեւ դուրս եկան դեպի Հայաստանի պետական սահմաններ, բացելով «Հումանիտար միջանցք», որը ԼՂ կապում է Հայաստանի հետ:

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Նախագահի մամուլի գրասենյակը տեղեկացնում է, թե Ռոբերտ Քոչարյանն ապրիլի 2-ին հրամանագիր է ստորագրել Մանվել Գրիգորյանին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնից ազատելու մասին:

Լվովում պղծել են հայկական եկեղեցին

էջ 4

Ստեփան Դեմիրճյան. «Մարտի 1-ի իրադարձությունների պատճառը ընտրությունների ժամանակ իրականացված բռնություններն էին»

էջ 5

«Ս. Սուրենյանցը մկրահոգիչ վիճակում է, բայց չի դադարեցնում հացադուլը»

էջ 5

Կյանքի որակի միջին ցուցիչով Հայաստանը 112-122-րդ տեղերում է

Հայաստանի հարեւաններից առջեւում 58 ցուցիչով Թուրքիան է, երկրորդը Վրաստանն է՝ 57, Ադրբեջանը Հայաստանից հետ է մնում՝ 48, իսկ Իրանի ցուցիչը 45 է

Կյանքի որակի 2008 թվականի ցուցիչում, որը իր հերթական համարում ներկայացրել է «Ինթերնեյշնլ Լիվինգ» ամսագիրը, Հայաստանը 112-122-րդ տեղերն է կիսում Չինաստանի, Բելառուսի, Կուբայի, Թաիլանդի եւ այլ երկրների հետ:

Աղյուսակը գլխավորում է Ֆրանսիան, որին հաջորդում են Շվեյցարիան, ԱՄՆ-ը, Լյուքսեմբուրգը եւ Գերմանիան:

Տարբեր երկրներում կյանքի որակի ամենամյա ցուցիչը կազմելու համար «Ինթերնեյշնլ Լիվինգ»-ի փորձագետները հաշվի են առնում 9 գործոն՝ ապրուստի գինը, մշակույթը եւ հանգիստը, տնտեսությունը, բնապահպանությունը, ազատությունը, առողջապահությունը, ենթակառուցվածքները, վտանգները եւ ապահովությունը, կլիման. այդ բոլոր բնագավառներում հավաքած միավորների ընդհանուր գումարը բաժանում են 9-ի եւ ստանում միջին ցուցիչը:

Ֆրանսիայի ցուցիչը 85 է, Շվեյցարիայինը՝ 84, Միացյալ Նահանգներինը՝ 83, Լյուքսեմբուրցինը՝ 82, Գերմանիայինը՝ 80:

ՀՀ վաստակել է հետեւյալ միավորները. ապրուստի գինը՝ 59, մշակույթը եւ հանգիստը՝ 56, տնտեսությունը՝ 40, բնապահպանությունը՝ 81, ազատությունը՝ 42, առողջապահությունը՝ 48, ենթակառուցվածքները՝ 47, վտանգները եւ ապահովությունը՝ 64 եւ կլիման՝ 72: Ընդհանուր առմամբ, Հայաստանը վաստակել է 509 միավոր, կյանքի որակի միջին ցուցիչը կազմել է 56:

Հայաստանի հարեւաններից առջեւում 58 ցուցիչով Թուրքիան է, երկրորդը Վրաստանն է՝ 57, Ադրբեջանը Հայաստանից հետ է մնում՝ 48, իսկ Իրանի ցուցիչը 45 է:

Այս տարի ցուցիչում ընդգրկված է 192 երկիր: Առավել ցածր ցուցիչ է տրվել Սիերա Լեոնեին, Սուդանին, Եմենին, Աֆղանստանին, Սոմալիին՝ 31-32, իսկ ամենավերջին տեղում Իրաքն է՝ 29:

27-ամյա պատմություն ունեցող «Ինթերնեյնլ Լիվինգ»-ը, որը գտնվում է ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի Բալթիմոր քաղաքում, կազմում է նաեւ ամբողջ աշխարհում մեծ հեղինակություն վայելող ամփոփագրեր ամենատարբեր թեմաներով՝ անշարժ գույքի, հյուրանոցների, զբոսաշրջիկների համար հետաքրքիր վայրերի մասին:

Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը Իսրայելի Քնեսեթում սկանդալ է առաջացրել

«PanARMENIAN.Net», 01.04.08: Այսօր, ապրիլի 1-ին տեղի է ունեցել Քնեսեթի գործերով հանձնաժողովի նիստը, որտեղ քննարկվում էր, թե որ հանձնաժողովում է քննարկվելու Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին հարցը: Նիստում սուր վիճաբանություն է առաջացել պատգամավորներ Զեեւ Էլկինի եւ Յոսեֆ Շագալի միջեւ: Յոսեֆ Շագալը, մասնավորապես, հայտարարել է, թե միայն պոպուլիստները կարող են պնդել, որ Իսրայելի խորհրդարանը քննարկի Հայոց ցեղասպանության հարցը: Ի պատասխան Զ.Էլկինը հիշեցրել է իր գործընկերոջը, որ այդ հարցի քննարկմանը կողմ էր մասնավորապես Շագալի գործընկերը «Մեր տունն Իսրայելն է» կուսակցության գծով իր գործընկեր Յուրի Շտերնը: Անդրադառնալով այդ խոսքերին, պատգամավոր Շագալն առաջարկել է «դադարեցնել սրբացնել Շտերնին», որից հետո բավականին կտրուկ արտահայտություններ է թույլ տվել իրեն:

Միջադեպից հետո Էլկինը հրաժարվել է մեջբերել իր հասցեին ասված վիրավորանքը: Նա հայտարարել է. «Ես ափսոսում եմ, որ բանավեճը նման բնույթ ընդունեց: Միշտ, առավել եւս խորհրդարանում, կարեւոր է մնալ քաղաքակիրթ երկխոսության եւ պարկեշտության սահմաններում: Կատարվածը վնասում է Քնեսեթի պատգամավորի կարգավիճակին»: Զ.Էլկինը նշել է նաեւ, որ որոշ պատգամավորներ արդեն առաջարկել են նրան քննարկման դնել Շագալի վարքը էթիկայի հանձնաժողովում: «Ես համոզված չեմ, որ կանեմ դա: Չէր ցանկանա ավելի բորբոքել սկանդալը»,-ասել է նա:

Իր հերթին, Շագալը հայտարարել է. «Էլկինը, որպես «Իսրայել-Հայաստան» միջխորհրդարանական խմբի նախագահ, կա նաեւ այդպիսին, «Մերեց» կուսակցության առաջնորդ Խաիմ Օրոնի հետ անցած չորեքշաբթի քննարկում էր նախաձեռնել Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության վերաբերյալ: Թեմա, որից Իսրայել պետությունը 60 տարի է ինչ հեռու է պահում իրեն, չեզոք դիրք որդեգրելով: Իմ բոլոր փորձերը բացատրել այդ պարոններին, որ դա չի կարելի անել մի շարք պատճառներով (երեւի ինքներդ եք հասկանում, թե ինչու), ապարդյուն եղան: Սակայն ժամանակն անհաջող էր ընտրված՝ Քնեսեթի նիստի ավարտին, ներկա էին ընդամենը 10-11 մարդ, եւ նրանք բոլորը «մշակվել էին»,հաղորդում է News.co.il-ը:

Հիշեցնենք, որ մարտի 26-ին Քնեսեթն առաջին անգամ սկզբունքային որոշում կայացրեց այն մասին, որ Հայոց ցեղասպանության թեման քննարկվելու է Իսրայելի խորհրդարանի հանձնաժողովներից մեկում: Առաջարկն արվել է պատգամավոր Խաիմ Օրոնի («Մերեց») կողմից: Պատգամավոր Զ.Էլկինը («Քադիմա») առաջարկեց այդ թեման քննարկել կրթության եւ մշակույթի հանձնաժողովում: Պատգամավոր Շագալն առաջարկեց այդ հարցը քննարկել արտաքին գործերի եւ պաշտպանության հանձնաժողովում:

Ռոբերտ Քոչարյանը նորից հայտարարել է ԼՂՀ հնարավոր ճանաչման մասին, եթե Բաքուն բանակցությունները փակուղի տանի

«PanARMENIAN.Net», 04.04.08: Եթե Ադրբեջանը շարունակի փորձել օգտվել Հայաստանի ներքաղաքական իրավիճակից Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, ապա Երեւանը ստիպված կլինի սրել իր դիրքորոշումը: Այդ մասին լրագրողներին հայտարարել է Հայաստանի գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը: «Հայկական կողմն ավելի վճռական եւ սկզբունքային կլինի բանակցային գործընթացում եւ, բնականաբար, որեւէ զիջում չկա եւ լինել չի կարող»,- ընդգծել է պետության ղեկավարը:

Նրա խոսքերով, հայկական կողմը պետք է հստակ հասկանա, որ ամուր դիրքորոշումների լավագույն երաշխիքը Ղարաբաղի հարցում լինելու է երկրի զարգացման տեմպերն ու կայունությունը: «Ինչպես ես արդեն ասել եմ, ես չեմ բացառում Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հնարավորությունը, եթե Ադրբեջանի քաղաքականությունը բանակցությունները փակուղի տանի»,- ասել է Ռոբերտ Քոչարյանը:

ԻՆՉՈՒ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԴԱ ՉԻ ԱՐԵԼ ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«ԼՐԱԳԻՐ», 02.04.08: Հայաստանի նախագահի նախկին թեկնածու, Ղարաբաղի նախագահի նախկին խորհրդական, ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը ապրիլի 2-ին Հայացք ակումբում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում անդրադարձել է Ղարաբաղը ճանաչելու կամ Ղարաբաղի հետ միջպետական պայմանագիր ստորագրելու մասին Ռոբերտ Քոչարյանի հայտարարություններին: Լրագրողների հարցին, թե արդյոք դա վտանգավոր կարող է լինել Հայաստանի համար, թե շահեկան, Արման Մելիքյանը պատասխանել է, որ վտանգավորը ոչինչ չանելն է, ինչն էլ տեղի է ունեցել անցած տարիների ընթացքում:

Արման Մելիքյանը նպատակահարմար է համարում սկսել Ղարաբաղի ճանաչման գործընթաց: Ինչ վերաբերում է Ռոբերտ Քոչարյանի հայտարարությանը, ապա Արման Մելիքյանն ասում է, որ իր համար ընդունելի կլիներ, եթե այդօրինակ հայտարարություն աներ վարչապետ Սերժ Սարգսյանը: Ռոբերտ Քոչարյանը հեռացող նախագահ է, նշում է Արման Մելիքյանն ու ասում, որ եթե այդ խնդիրները նա համարում էր իսկապես անհրաժեշտ, ինչպես հայտարարել է, ապա թող աներ անցյալ տասը տարիների ընթացքում, ոչ թե այդ մասին խոսեր իր հեռանալուց տասը օր առաջ: Արման Մելիքյանի խոսքով, եթե Սերժ Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանի իշխանության ժառանգորդն է, ապա նա պետք է աներ այդպիսի հայտարարություն, մինչդեռ Սերժ Սարգսյանը, ըստ Արման Մելիքյանի, հիմա անում է հակառակը, ասելով, թե ինքն առաջիկայում չի անդրադառնալու Ղարաբաղի ճանաչման խնդրին:

ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր

«ԱԶԳ», 01.04.08: Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, մի քանի օր է, ինչ միջնորդավորված բանակցություններ են ընթանում Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ իշխանությունների, հիմնականում Սերժ Սարգսյանի կողմնակիցների միջեւ: Այդ բանակցությունները, ինչպես ասացինք, միջնորդավորված են, դրանց մի մասը օտարերկրյա պաշտոնյաների բազմակողմ շփումների շրջանակում են ընթանում եւ նպատակ ունեն կողմերի միջեւ համանման մոտեցումներ գտնելու: Այս տեղեկատվության հավաստիությունը պաշտոնական աղբյուրներից ստուգել չհաջողվեց, սակայն վերջին շրջանում Լեւոն Տեր-Պետրոսյանի լռությունը ներքաղաքական իրադրության վերաբերյալ, հուշում է, որ այնուամենայնիվ, որոշակի կուլիսային հանդիպումներ տեղի են ունենում եւ փորձ է արվում ինչ-որ պայմանավորվածություններ ձեռք բերել: Ասենք նաեւ, որ այս տեղեկատվությունն ապրիլմեկյան կատակ չէ:

ՎԱՆԱՏՈՒՐՈՒՄ ՅՈՒՅՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ա1+», 04.04.08: Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում այսօր շարունակվում էր ի պաշտպանություն ԱԺ պատգամավոր Սասուն Միքայելյանի բողոքի ակցիան: Նրանք իշխանություններից պահանջում էին ազատ արձակել մարտի 12-ին ձերբակալված Սասուն Միքայելյանին, իսկ վերջինիցս պահանջում էին դադարեցնել հացադուլը: Ի դեպ, այսօր ոստիկանների կողմից որեւէ խոչընդոտ չի եղել: Հիշեցնենք, որ ի պաշտպանություն ԱԺ պատգամավոր Սասուն Միքայելյանի՝ արդեն 10 օր է հացադուլ է հայտարարել ազատամարտիկ Արշավիր Բոգինյանը: Վերջինիս վիճակը կայուն է. նրան այսօր չեն այցելել բժիշկներ:

ԿԻՊՐՈՍՅԻ ԹՈՒՐՔԵՐԸ ԿՀԻՇԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

«ԱԶԳ», 01.04.08: Թուրք կիպրոսցիների առաջադիմական կուսակցությունները Բոյուգ Խանում ապրիլի 24-ին առաջին անգամ կնշեն Հայոց ցեղասպանության տարելիցը: Ըստ «Նոյյան տապանի», «Կիպրահայեր» կայքէջը հաղորդում է, որ հաջորդ շաբաթ հայտնի կդառնա միջոցառման հիմնական բանախոսի անունը:

Հայաստանը ստեղծված իրավիճակից դուրս բերելու համար Ագոյի խումբը ներկայացրել է 6 կետից բաղկացած առաջարկ

Այցով Հայաստանում գտնվող Ագոյի խումբը ներկայացրել է 6 կետից բաղկացած առաջարկ, որը նպատակաուղղված է երկիրը ընտրություններից եւ մարտի 1-ի իրադարձություններից հետո ստեղծված վիճակից դուրս բերելուն եւ ժողովրդավարական ուղուն վերադարձնելուն: Այս մասին, ըստ «Նոյյան տապանի», մարտի 31-ի ասուլիսում հայտարարեց ԵԽ Նախարարների կոմիտեի մոնիտորինգի՝ Ագոյի խմբի ղեկավար, դեսպան Պեր Սյոգրենը:

Նա հայտնեց, որ Ագոյի խումբը կողմ է երկոխոսությանը երկրի բոլոր քաղաքական ուժերի միջեւ: Պ.Սյոգրենը կարեւորեց հնարավորինս շուտ եւ առանց նախապայմանների երկխոսություն սկսելու անհրաժեշտությունը: Ըստ նրա՝ կառուցողական երկխոսությունը իրավիճակը շտկելու ամենաարդյունավետ միջոցն է:

Խմբի ղեկավարը հայտարարեց, որ իրենք միանում են միջազգային տարբեր կազմակերպությունների կոչերին՝ ազատ արձակել բոլոր նրանց, ովքեր ձերբակալվել են քաղաքական գործունեության համար: Մոնիտորինգի խումբն առաջարկում է պարբերաբար իրեն տեղեկացնել 102 կալանավորվածների ազատ արձակման եւ դատավարությունների ընթացքի մասին:

Պ.Սյոգրենը հայտնեց, որ նախորդ օրը պատվիրակությունն այցելել էր «Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ եւ տեղեկացել, որ այնտեղ պահվող կալանավորները, որոնց մի մասը ձերբակալված է դեռեւս մարտի սկզբից, մեկուսացված են իրենց հարազատներից: Խմբի ներկայացրած առաջարկի առաջին կետը վերաբերում է ձերբակալվածներին ընտանիքների հետ շփման հնարավորություն ընձեռելուն:

Ագոյի խումբը գտնում է, որ մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների քննությունը պետք է անցկացվի Հայաստանի պետության կողմից: Այն պետք է լինի անկախ, անկողմնակալ եւ վայելի հանրության լիակատար վստահությունը: Քննությանը մասնակցելու համար կարող են ներգրավվել նաեւ միջազգային փորձագետներ:

Պ.Սյոգրենը ափսոսանք հայտնեց, որ վերջերս «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասինե օրենքում խորհրդարանի ընդունած փոփոխությունները կատարվել են առանց ԵԽ-ի հետ խորհրդակցելու: Ըստ նրա՝ ներկայումս Վենետիկի հանձնաժողովը հրատապ կարգով իրականացրել է օրենքի փորձաքննությունը, եւ մի շարք քննադատական եզրակացությունների հանգել: Եզրակացություններն ուղարկվել են ՀՀ կառավարություն, որը դրանք կփոխանցի խորհրդարանին: «Հավաքների ազատությունը իրավունք է, որն ամրագրված է Եվրոպական կոնվենցիայում, եւ սակարկության առակա չի կարող լինել»,- նշեց Ագոյի խմբի ղեկավարը:

Ագոյի խմբի առաջարկները քննարկվել են իշխանությունների եւ ընդդիմության հետ: Պատվիրակությունը հանդիպել է առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, արդարադատության նախարարի, գլխավոր դատախազի հետ, եւ պատրաստվում է հանդիպել վարչապետ Սերժ Սարգսյանի հետ:

Ըստ դեսպան Սյոգրենի՝ այս անգամ մոնիտորինգի խմբում ներգրավված են ԵԽ 9-ը պետությունների դեսպաններ: «Սա ամենամեծ խումբն է, որ այցելում է Հայաստան՝ 2001թ.-ին Ագոյի խմբի ստեղծումից ի վեր, եւ սա վկայում է, թե ԵԽ-ն եւ մեր կառավարությունները որքան հետաքրքրված են Հայաստանում կատարվող զարգացումներով»,- նշեց նա:

Լվովում պղծել են հայկական եկեղեցին

Ուկրաինայից ստացված հաղորդագրության համաձայն, բարբարոսները վնասել են Լվովի հայկական եկեղեցու ճակատը եւ ավերել են խաչը: Ինչպես «Արեւմտյան տեղեկատվական գործակալությանը» փոխանցել է եկեղեցու սպասավոր հայր Թադեւոսը, դեպքը տեղի է ունեցել մարտի 29-ից 30-ը ընկած ժամանակահատվածում:

Լվովի քաղաքային խորհրդի պատգամավոր Վարդգես Արզումանյանը եկեղեցու շենքի ճակատը եւ խաչը վերականգնելու խնդրանքով դիմել է Լվովի պատմական ժառանգության պահպանման վարչությանը:

Հայր Թադեւոսի փոխանցմամբ՝ քաղաքի պաշտոնյաներն ասել են, թե պատրաստ են աջակցել վերանորոգման հարցում՝ պայմանով, որ ծախսը հոգա տեղի հայ համայնքը:

Վարդգես Արզումանյանն ասել է, թե հայ համայնքը իշխանություններին բազմիցս հորդորել է լրացուցիչ հսկողություն սահմանել Լվովի այն թաղամասում, որտեղ գտնվում է հայկական եկեղեցին:

«Այդ թաղամասում շատ հաճախ են հավաքվում քրեական հակումներով եւ անվայելուչ վարքով անձինք: Մենք չենք կարծում, թե բարբարոսության թիրախը հենց հայկական եկեղեցին էր. եթե այդտեղ ուղղափառ եկեղեցի լիներ, այն նույնպես կպղծվեր», - ասել է Լվովի քաղաքային խորհրդի պատգամավոր Վարդես Արզումանյանը եւ հավելել. - «Հուսով եմ, որ ոստիկանապետը ուշադրություն կդարձնի քաղաքի պատմական հուշարձանների պաշտպանությանը: Հարկ է, որ այստեղ միշտ կայանվեն ոստիկանների մեքենաները՝ դրանք կվանեն վանդալներին»:

Գագիկ Ջհանգիրյանը հերքում է իշխանությունների հետ համաձայնության գալու մեղադրանքը

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Կ. 03.04.08: Հայաստանի գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանը, որը մեղադրվում է ապօրինի զենք պահելու եւ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն կիրառելու մեջ, այսօր հերքել է մամուլում հրապարակված տեղեկությունները, թե մեկուսարանում նա համաձայնության է եկել իշխանությունների հետ եւ ստորագրել իրենից պահանջվող ցուցմունքները:

«Հրապարակ» թերթը պնդել է, թե Ջհանգիրյանը համաձայնության է եկել իշխանությունների հետ՝ իր հարազատների հետ տեսակցությունների եւ հեռախոսային խոսակցությունների արգելքը հանելու դիմաց:

Ինչպես «Ազատություն» ռադիոկայանին հայտնեց նրա շահերի պաշտպան Լուսինե Սահակյանը, Գագիկ Ջհանգիրյանը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է. - «Որեւէ համաձայնության որեւէ մեկի հետ չեմ եկել եւ չեմ պատրաստվում գալ: Տեսակցությունների եւ հեռախոսային խոսակցությունների արգելքը հանվել է ոչ միայն իմ, այլեւ «Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող բոլոր քաղբանտարկյալների մասով, այն էլ Ագոյի խմբի պահանջներից հետո: Ես մնում եմ իմ արտահայտած տեսակետներին հավատարիմ եւ չեմ հրաժարվի ոչ մի բառից ու ստորակետից: Հակառակ դեպքում ես կդադարեմ Ջհանգիրյան լինելուց»:

Լուսինե Սահակյանը նաեւ պնդել է, որ Ջհանգիրյանը անմեղ է: «Այդ կապակցությամբ մենք պատրաստվում ենք հանդես գալ հայտարարությամբ», - ասել է փաստաբանը:

Հովիկ Արսենյան.

«Սուրեն Սուրենյանցը մտահոգիչ վիճակում է, բայց չի դադարեցնում հացադուլը»

«Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը, որը մարտի 24-ից հացադուլ է հայտարարել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, մտահոգիչ վիճակում է, սակայն չի պատրաստվում դադարեցնել հացադուլը: Այդ մասին երեկ «Ազատություն» ռադիոկայանին հայտնեց նրա շահերի պաշտպան Հովիկ Արսենյանը:

Նրա վկայությամբ՝ Սուրենյանցը «շարունակելու է հացադուլը այնքան ժամանակ, մինչեւ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի եւ իրեն ազատ արձակեն»:

Պատասխանելով Սուրենյանցի առողջական վիճակի մասին հարցին, փաստաբանն ասել է. - «Տեսողության հիվանդություն ուներ, եւ ներկա պահին աչքերը ամբողջությամբ արյունակալված են, երիկամների ցավեր ունի»:

Սուրեն Սուրենյանցը մեղադրվում է զանգվածային անկարգությունների, օրենքով սահմանված կարգի խախտմամբ հասարակական միջոցառում կազմակերպելու եւ պետական իշխանությունը յուրացնելու մեջ:

Ստեփան Դեմիրճյան.

«Մարտի 1-ի իրադարձությունների պատճառը ընտրությունների ժամանակ իրականացված բռնություններն էին»

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Կ. 04.04.08: Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) նախագահ Ստեփան Դեմիրճյանի համար «ակնհայտ» է, որ մարտի 1-ի եւ լույս 2-ի գիշերվա իրադարձությունների պատճառը փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների ժամանակ իրականացված «բռնություններն ու կեղծիքներն» էին:

Լրագրողների հետ հանդիպմանը ուրբաթ օրը Դեմիրճյանն ասաց նաեւ, որ այդ իրադարձությունները հետեւանք էին խաղաղ ցուցարարների դեմ «իշխանության կողմից ուժի չարդարացված կիրառման». - «Խաղաղ հանրահավաք էր տեղի ունենում, եւ մենք էլ կոչ էինք անում հանդարտության... Եվ այդտեղ էլ պետք չէր ուժ գործադրել: Դրանից հետո մարդիկ դիմեցին ինքնապաշտպանության: Ինչքան կարելի է ժողովրդի հետ խոսել ուժի լեզվով: Նույնը տեղի ունեցավ 2004 թվականի ապրիլի 12-ին»:

Անդրադառնալով իշխանության եւ ընդդիմության միջեւ երկխոսության թեմային՝ ՀԺԿ-ի առաջնորդը, մասնավորապես, ասաց, որ առաջնային խնդիրը «քաղաքական հետապնդումները դադարեցնելն է ու քաղաքական գործունեության համար ձերբակալվածներին ազատ արձակելն է»:

Ստեփան Դեմիրճյանը հերքեց շրջանառվող լուրերը, թե ընդդիմությունը նոր հանրահավաքներ է ծրագրում՝ նոր բախումներ հրահրելու նպատակով. - «Բախում չի լինի, եթե իշխանությունների չգնան բախումների. եւս մեկ անգամ նշեմ՝ ընդդիմության բոլոր հավաքները կրել են խաղաղ բնույթ»:

«Անցած նախագահական ընտրությունների արդյունքում առաջացած ճգնաժամը պետք է հանգուցալուծվի ընտրությունների միջոցով», - հայտարարեց նա: - «Այսօր նաեւ առաջարկներ, պահանջներ են հնչում անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ... Մենք էլ ենք գտնում, որ այդ պահանջը շատ տրամաբանական է»:

«Իշխանությունները պետք է գիտակցեն, որ ռեպրեսիվ մեթոդներով հաղթահարել այս ճգնաժամը անհնար է... Եվ որեւէ բան ավարտված չէ. մարդիկ վիրավորված են, մարդիկ վրդովված են, եւ այս արտաքուստ հանդարտությունը որեւէ բան չի նշանակում», - ասուլիսում հայտարարեց ՀԺԿ-ի առաջնորդը:

Ռոբերտ Քոչարյան.

«Արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով երկխոսության հասնելը ամենաաբսուրդ միտքն է»

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Կ. 04.04.08: Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանն այսօր կարծիք է հայտնել, թե արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով երկխոսության հասնելը «ամենաաբսուրդ միտքն է»:

«Չեմ կարծում, որ Հայաստանում որեւէ խորհրդարանական ընտրություն կարող է բերել ներքաղաքական իրավիճակի մեղմացման, ճիշտ հակառակը», - ասել է նախագահը:

Խոսելով մարտի 1-ի դեպքերի մասին, Ռոբերտ Քոչարյանը նշել է. - «Արդեն ակնհայտ է, որ անկարգությունները կազմակերպված բնույթ էին կրում: Այն մարդիկ, ովքեր այսօր փորձում են շահարկել քաղաքական բանտարկյալների թեման, խորը հիասթափություն են ապրելու դատական նիստերի ժամանակ, երբ ծանոթանան այն փաստացի նյութերի հետ, որոնք այսօր քննչական խումբը կուտակում է, որովհետեւ տեսնելու են, թե ում են պաշտպանել»:

Ռոբերտ Քոչարյանը նաեւ կարծիք է հայտնել. - «Ճիշտ կլինի, եթե մեր օրենսդրությունը համարի քրեորեն պատժելի արարք հայ ժողովրդի տարբեր հատվածների մեջ սեպ խրելու կամ ատելություն սերմանելու գործունեությունը»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ պաշտոնից ազատվեց պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Մանվել Գրիգորյանը, Ռոբերտ Քոչարյանը հայտնել է. - «Հրամանագրի մեջ չկա, թե ինչու է ազատված, բայց նաեւ կա Մանվել Գրիգորյանի դիմումը»:

Անդրադառնալով Ղարաբաղի կարգավորման հարցին, նախագահն ասել է. - «Ադրբեջանական կողմի վերջին քայլերը ուղղակի պարտադրում են հայկական կողմին ավելի վճռական քայլերի դիմել, իսկ այդ քայլերը պետք է որոշեն հաջորդ նախագահը եւ հաջորդ կառավարությունը»:

սկիզբը՝ էջ 1

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԴԵՂԱՏՈՄՍ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Սերժ Սարգսյանը առաջին հերթին պետք է ձերբազատվի օլիգարխներից. սա է »ժողովրդական կուսակցության« ղեկավար Տիգրան Կարապետյանի՝ Հայաստանում ստեղծված իրավիճակը փոխելու դեղատոմսը.

Իսկ Սերժ Սարգսյանը կարո?ղ է ձերբազատվել օլիգարխներից, եթե նրանց օգնությամբ է դարձել նախագահ՝ հարցին՝ այսօր պարոն Կարապետյանը պատասխանեց.»Ոչ թե ձերբազատվի, այլ ասի հերիք եղավ, բոլ եղավ: Նա կարող է այդպես ասել եւ պետք է ասի, որ հերիք է, ինչ հարկեր չմուծեցին եւ արտոնյալ եղան, պետք է այժմ արդեն սկսել օրինական դաշտում աշխատել: Բոլոր պետությունները հասել են այդ սահմանին, երբ ասվել է հերիք ու բոլ է: Օլիգարխները այնքան փող են կուտակել, որ ժամանակն է արդեն իրենց փողը ներդնեն այս կամ այն տեղերում, ոչ թե ժողովրդի փողը«: Որքան էլ օլիգարխներից ազատվելն այսօր Տիգրան Կարապետիչը համարում է կարեւոր քայլ, սակայն գտնում է, որ Սերժ Սարգսյանը պետք է կատարի հստակ, ոչ թե կիսատ քայլեր, հակառակ դեպքում, մարդկանց մեկուսացնելով՝ միեւնույն է, խնդիրները չեն լուծվի:

»Ժողովուրդն այսօր ակնկալում է կտրուկ քայլեր: Պետք է լինի երկխոսություն ընդդիմության հետ«,- ասաց Տիգրան Կարապետիչը: Նա ենթադրում է, որ ընդդիմությունը երկխոսության կհամաձայնվի, եթե առաջին հերթին իշխանություններն ազատ արձակեն ձերբակալվածներին: Ձերբակալվածների ազատ արձակումից հետո, ըստ նրա, ընդդիմությունը պետք է պահանջի ցրել խորհրդարանը եւ նոր ընտրություններն անցկացնել: Թերեւս սա այն հարցն է, որին Կարապետիչը հավանություն է տալիս: »Դա կլինի բարոյական քայլ, որովհետեւ ներկայիս խորհրդարանը ձեւավորվել է անբարոյական ձեւով«,- ասաց նա: Նրա կարծիքով այսօր Սերժ Սարգսյանի համար անխուսափելի քայլ է նաեւ կառավարության կազմի՝ 80 տոկոսի փոփոխությունը: Նա այսօր հրաժարվեց ասել, թե կոնկրետ կառավարության որ անդամներին պետք է փոխի Սերժ Սարգսյանը, սակայն հուշեց. »Պետք է ազատվել նեգատիվ ընկալում ունեցող անձանցից: Օրինակ՝ կարող եմ ասել, որ ժողովուրդը դժգոհ է տարածքներից/ Տարածքային կառավարման նախարարություն-խմբ«: Տիգրան Կարապետիչը Սերժ Սարգսյանին նաեւ հուշեց, որ փոփոխությունների համար շատ քիչ ժամանակ ունի:

16-Ը ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ, 14-Ը ՀՐԱԺԱՐՎԵԼ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում

1. Սուրենյանց Սուրեն - 24.03.2008թ.-ից:
2. Այվազյան Մարգպետունի - 01.04.2008թ.-ից:
3. Առաքելյան Վլադիմիր - 01.04.2008թ.-ից:
4. Հովհաննիսյան Սայաթ - 01.04.2008թ.-ից:
5. Մակեյան Պետրոս - 01.04.2008թ.-ից:
6. Ներսիսյան Ավետիք - 02.04.2008թ.-ից:
7. Հարությունյան Սամվել - 02.04.2008թ.-ից:
8. Գասպարյան Խաչիկ - 02.04.2008թ.-ից:
9. Պետրոսյան Ռաջա - 02.04.2008թ.-ից:
10. Բաղդասարյան Տիգրան - 02.04.2008թ.-ից:
11. Բարեղամյան Արամ - 02.04.2008թ.-ից:

ՀՀ ԱՆ ,Վարդաշենե քրեակատարողական հիմնարկում:

1. Այվազյան Սմբատ - 02.04.2008թ.-ից:
2. Մալխասյան Իսահակ - 02.04.2008թ.-ից:
3. Շահնազարյան Արթուր - 02.04.2008թ.-ից:
4. Զաքարյան Աշոտ - 03.04.2008թ.-ից:

ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում

1. Միքայելյան Սասում - 02.04.2008թ.-ից:

Շտապում են ամուսնանալ

Այս տարվա մարտի 15-ի դրությամբ ընդհանուր առմամբ 300 հազարական դրամ են ստացել թվով 1086 ամուսնացող ընտանիքներ: Այս մասին Karabakh-Open.com-ին տեղեկացրել են ԼՂՀ սոցապահովության նախարարությունում: Հունվարի 1-ից մինչեւ այսօր ընկած ժամանակահատվածում միայն Ստեփանակերտի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում գրանցվել է 731 ամուսնություն: Եթե նման տեմպով շարունակվի ամուսնությունների գրանցումը, ապա այն կանցնի պետբյուջեով նախատեսված 1500-ը:

Հիշեցնենք, որ այս տարվա բյուջեով նոր ամուսնացող զույգերին 300 հազարական դրամի տրամադրման համար հատկացվել է 450 մլն դրամ, ինչը կբավականացնի 1500 ընտանիքի: Իսկ թե ի՞նչ կարվի այն դեպքում, երբ այս տարվա գրանցվող ընտանիքներն ավելանան 1500-ից՝ հայտնի չէ: Երեւի դրանով է պայմանավորված որոշ զույգերի՝ ամուսնությունը որքան հնարավոր է շուտ գրանցելու ցանկությունը: Կա նաեւ մեկ այլ փաստ եւս. մարդկանց շրջանում լուրեր են պտտվում, որ 300 հազարական դրամը տրամադրվելու է միայն այս տարի: Սա նույնպես ազդում է զույգերի շտապողականության վրա:

48,1 տոկոսը կազմել է արական եւ 51,9 տոկոսը՝ իգական սեռի ներկայացուցիչներ

2008 թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ բնակչության թվաքանակը կազմել է 138834 մարդ, որից քաղաքաբնակ բնակչությունը՝ 71652 մարդ կամ 51,6%-ը: Բնակչության թվաքանակը 01.01.2007թ. համեմատ աճել է 1087 մարդով կամ 0.8%-ով, ընդ որում, քաղաքաբնակ բնակչությունը՝ 854 մարդով կամ 1,2 տոկոսով. այս մասին տեղեկացվում է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հաղորդագրության մեջ:

2008թ. տարեսկզբին հանրապետության բնակչության 48,1 տոկոսը կազմել է արական – 51,9 տոկոսը՝ իգական սեռի բնակչությունը:

Հանրապետության բնակչության 36,7%-ը կենտրոնացված է մայրաքաղաքում, 16,7%-ը՝ Մարտունու, 13,7%-ը՝ Մարտակերտի, 12,5%-ը՝ Ասկերանի, 8,9%-ը՝ Հադրութի, 6,2 տոկոսը Քաշաթաղի, 3,3%-ը՝ Շուշիի – 2%-ը՝ Շահումյանի շրջաններում:

2008թ. տարեսկզբին հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 24,5%-ը կազմել է 0-15 տարեկան, 64,5%-ը աշխատունակ տարիքի – 11%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչությունը: Այլ կերպ՝ 2008թ. տարեսկզբին հանրապետության յուրաքանչյուր 1000 աշխատունակ տարիքի բնակչության բաժին է ընկել 550 երեխա – կենսաթոշակային տարիքի բնակիչ:

2007 թ. հանրապետությունում ծնվել է 2145 երեխա, որը 2006թ. համեմատ ավելացել է 2,0%-ով: 2007թ. մահացածների թիվը կազմել է 1227 մարդ, որը 2006թ. համեմատ նվազել է 0,6%-ով: Մինչ– 1 տարեկան մահացած երեխաների թիվը կազմել է 19, որից 5-ը աղջիկներ են: 2007թ. գրանցվել է 1 մայրական մահացության դեպք: Մինչ– 5 տարեկան մահացած երեխաների թիվը կազմել է 25, որից 10-ը աղջիկներ են՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 35 – 9 երեխայի դիմաց:

2007թ. ԼՂՀ-ում բնակչության բնական աճը կազմել է 918 մարդ – 2006թ. համեմատ աճել 51 մարդով կամ 5,9%-ով:

2007թ. գրանցված ամուսնությունների թիվը կազմել է 519՝ 2006թ. 827-ի դիմաց, ամուսնալուծությունների թիվը կազմել է 123՝ նույնքան, որքան նախորդ տարում էր: 2007թ. ԼՂՀ-ում պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը (առանց ներքին միգրացիայի) կազմել է 831 մարդ, իսկ մեկնողների թվաքանակը՝ 1026 մարդ:

Հայաստանի բուհերում Ղարաբաղի համար պետպատվերով կհատկացվի 60 տեղ

Ղարաբաղի կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի բուհերում Ղարաբաղի համար պետպատվերով սահմանված տեղերի ցանկը: Երկու հանրապետությունների կրթության նախարարությունների պայմանավորվածության համաձայն, պետպատվերով տեղերի քանակը 60 է: Ինչպես նշել է ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, ցուցակը կազմված է պետական գերատեսչությունների հայտերին համապատասխան: Մասնավորապես, առողջապահության նախարարությունը հայտ է ներկայացրել 10 տեղի համար:Այդ մասնագիտությունների ուսուցումը լրիվությամբ կամ մասնակի կվճարի պետությունը:

Կառավարությունը չքննարկեց Արցախի պետհամալսարանում պետպատվերով եւ վճարովի տեղերի մասնագիտությունների ցանկը: Վարչապետ Արա Հարությունյանի խոսքերով, անհրաժեշտ է որոշ հարցեր ճշտել: Նախնական նախագծի համաձայն, Արցախի պետհամալսարանում պետպատվերով նախատեսված է 250 տեղ, վճարովի ստացիոնարի համար՝ 525, իսկ հեռակայի՝ 275 տեղ:

Այցելել է

«Եվրատեսիլ» երգի մրցույթին նախորդող, այսպես կոչված, այցելությունների փուլը, երբ երգիչները շրջում են մրցույթին մասնակից երկրներով, արդեն սկսվել է: ՀՀ-ն «Եվրատեսիլ-2008»-ում ներկայացնող Սիրուշոն նախօրեին վերադարձել է Վրաստանից: «Քելե, քելե» երգը ներկայացնելուց բացի, երգչուհին հանդիպել է այնտեղի հայ համայնքի հետ: «Հ1»-ի արտաքին կապերի ղեկավար Դիանա Մնացականյանը հավաստիացրել է, որ երգչուհին Վրաստանում ջերմ ընդունելության է արժանացել: Այն, թե Վրաստանից բացի է՞լ որ երկրում կլինի Սիրուշոն, դեռեւս պարզ չէ: Թեեւ հայկական կողմը հրավերներ ուղարկել է «Եվրատեսիլ-2008»-ին մասնակցող բոլոր երկրներին, բայց դեռեւս որեւէ երկրից երգիչ չի եկել ՀՀ: Ինչպես տեղեկացրել է Դ. Մնացականյանը, դրա պատճառն այն է, որ մասնակիցների գրաֆիկը բավականին սեղմ է: Մայիսի 20-ին կայանալիք կիսաեզրափակիչ փուլին ՀՀ-ի հետ մրցելու է նաեւ Ադրբեջանը: «Եվրատեսիլի» կայքէջում անցկացված քվեարկության արդյունքում Սիրուշոն լավագույն հնգյակում է՝ 20% ձայնով: Վրաստանի ներկայացուցիչն ունի 24%, իսկ Ադրբեջանը՝ 16%: Ադրբեջանի հարցումը «Day.Az» կայքում կոնկրետ ՀՀ-ի հետ է կապված՝ «Արդյո՞ք առաջ կանցնի Ադրբեջանը ՀՀ ներկայացուցչից»: «Այո» է քվեարկել 57,4%-ը, «Ոչ»՝ 32,7, իսկ «Միեւնույնն է»՝ 10%-ը:

Գյումրիում պայթյունի հետեւանքով զոհվել է երկու մարդ

Գյումրիի Կ. Դեմիրճյան փողոցի թիվ 51 տանը մարտի 29-ին հայտնաբերվել են ամուսիններ՝ 1949 թվականին ծնված Մկրտիչ եւ 1954 թվականին ծնված Ասյա Աղաբաբյանների դիակները: Այս մասին նույն օրը՝ ժամը 13:05-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության քննչական վարչության Շիրակի մարզի քննչական բաժին ահազանգ է ստացվել:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրել են քննչական բաժնից, ըստ դատաբժշկական նախնական հետազոտման՝ ամուսինների մոտ հայտնաբերվել են պայթյունի հետեւանքով առաջացած վնասվածքներ:

շար՝ էջ 8

սկիզբը՝ էջ 7

Պայթյունի մասին վկայում են գետնին եւ պատուհանին հայտնաբերված ապակե բեկորները եւ հարեւանների վկայությունը՝ ժամը 13:00-ի սահմաններում լսած պայթյունի ձայնի մասին:

Գազի բալոնի հետեւանքով առաջացած պայթյունը հերքվում է Շիրակի մարզի քննչական բաժի կողմից: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

32-ԱՄՅԱ ՀԱՇՄԱՆԴԱՄԸ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

32 տարեկան Հարություն Թովմասյանը ղարաբաղյան պատերազմի մասնակից է, եղել է Զանգելանի, Հորադիզի ազատամարտերի անմիջական մասնակիցը: Հոդացավերի ոչ լիարժեք բուժման պատճառով երկու անչափահաս երեխաների հայրն առաջին կարգի հաշմանդամ է դարձել՝ գամվելով շարժասայլակին: Հարություն Թովմասյանը շտապ վիրահատության կարիք ունի, որի համար պահանջվում է 6 հազար ԱՄՆ դոլար գումար: Պատերազմի մասնակիցը բարեգութ մարդկանց աջակցությունն է հայցում:

Հեռ. +037493030014, +037410489224

Արժութային հաշիվը (Հայաստանից)

Տարադրամի տեսակը. AMD

Բանկային տվյալներ. ՎՏԲ բանկ 35 բաժանմունք Շենգավիթ, Երեւան հ. 160690003316, Թովմասյան Հարություն

Արժութային հաշիվը (բոլոր երկրներից բացի Ռուսաստանից)

Տարադրամի տեսակը՝ USD

56 INTERMEDIARY: AMERICAN EXPRESS BANK LTD, NEW YORK

SWIFT CODE: AEIBUS33

New York Agency, P. O. Box 740, New York, NY 10008

57 BENEFICIARYs BANK: 740357

~VTB BANK (ARMENIA) CJSC, YEREVAN,ARMENIA, BRANCH 35

SWIFT:ARMJAM22

59 BENEFICIARY: TOVMASYAN HARUTYUN:

Երեւան- Ստամբուլ չվերթի տոման էժանացել է

Ապրիլի 1-ից «Արմավիա» ընկերությունը Երեւան-Ստամբուլ-Երեւան չվերթի տոմսի արժեքը նվազեցրել է մոտ 50%-ով. ներկայիս 450 ԱՄՆ դոլարի փոխարեն այն կկազմի 200 դոլար, «Նոյյան տապան»- ին հայտնեց ընկերության մամուլի քարտուղար Նանա Ավետիսովան:

«Արմավիան» Երեւան-Ստամբուլ ուղղությամբ իրականացնում է շաբաթական երկու չվերթ:

Ապրիլի 1-ից «Արմավիան» իրականացրեց դեպի Աստրախան իր առաջին կանոնավոր չվերթը: Նշվեց, որ առաջիկայում ընկերությունը նախատեսում է չվերթներ իրականացնել նաեւ Մարսել, Դյուսելդորֆ (Գերմանիա) եւ Ռիգա:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. մարտի 28-ին երեկոյան ժ.20:30-ին Կիպրոսում գործող ՀՅԴ, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության և ՌԱԿ միավորների համատեղ կազմակերպությամբ Նիկոսիայի «Ութուճյան» սրահում կայացել է Արցախյան ազատագրական պայքարի 20-ամյակին նվիրված հանդիսություն, որն իրականացվել է կիպրահայ համայնքի շրջանակներում: Ներկա են գտնվել ազգային և մշակութային կառույցների, տեղի հայկական ԶԼՄ-ների ներկայացուցիչները, կղերից դասը: Տարեդարձի առթիվ իրենց առանձնահատուկ մասնակցությունն են ունեցել կիպրացի բարձրաստիճան զինվորականության և տեղում հավատարմագրված օտարերկրյա ռազմադիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները՝ հանձին Կիպրոսի ՊՆ պաշտպանական քաղաքականության դիրեկտորատի պետ, ՌՕՈՒ փոխգնդապետ Ֆիլոկիպրոս Յաննակիսի, Ազգային Գվարդիայի Գլխավոր Շտաբի արտաքին հարաբերությունների պատասխանատու, փոխգնդապետ Անդրեաս Խրիստոֆորուի, Ռուսաստանի Դաշնության ռազմական կցորդներ ՌԾՈՒ կապիտան Դմիտրի Դանիլովիչի և փոխգնդապետ Դմիտրի Լարիոնովի:

Բացման հանդիսավոր խոսքից հետո ներկաները 1 րոպե լռությամբ հոտնկայս հարգել են Սումգայիթի, Բաքվի և Կիրովաբադի կոտորածների հայ նահատակների հիշատակը, ցուցադրվել են համապատասխան տեսաերիզներ:

Օրվա խորհրդի վերաբերյալ կարճ բանախոսությամբ հանդես է եկել ՀՀ ռազմական կցորդը, ինչից հետո կայացած հրապարակային հարցազրույցի ընթացքում պատասխաններ են տրվել ներկաներին հուզող հարցերին: Հանդիսությունն ավարտվել է կիպրահայ հոգևոր առաջնորդ Տ.Վարուժան արքեպիսկոպոս Հերկելյանի «Պահպանիչով»:

Միջոցառման ընթացքում, մանավանդ, ներկա օտար բարձրաստիճան զինվորականությանը փոխանցվել են նյութեր ՀՀ ԶՈՒ և ԼՂ հիմնախնդրի պատմության մասին, հայության մասին գրականություն (հունարեն, ռուսերեն և անգլերեն): Վերջիններս միջոցառումից հետո հոգևոր առաջնորդի կողմից ընդունվել և մասնակցել են կարճատև հյուրասիրության:

Ընդհանուր առմամբ, միջոցառումն անցել է հաջողությամբ և տարեդարձին համահունչ մակարդակով:

Աստված և մեր բանակը պահապան հայ ազգին ու Հայաստանի Հանրապետությանը:

Հունաստանում և Կիպրոսում ՀՀ ռազմական կցորդ
Փոխգնդապետ Սամվել Ռամազյան

ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հանրապետությունում 2008թ. մարտի 31-ի դրությամբ, օպերատիվ տվյալներով, կատարվել է 1131.3հա գարնանացան, որը կազմել է 2007թ-ի գարնանացանի 33.6 տոկոսը:

Ըստ շրջանների կատարվել է՝ Ասկերանի շրջանում 237.1հա, որը կազմել է նախորդ տարվա կատարված գարնանացանի 27.4 տոկոսը, Հադրութի շրջանում՝ համապատասխանաբար 215.0հա եւ 52.5տոկոս, Մարտակերտի շրջանում՝ 230.0հա եւ 28.6տոկոս, Մարտունու շրջանում՝ 185.2հա եւ 36.7 տոկոս, Շահումյանի շրջանում՝ 3.0 հա եւ 3.2 տոկոս, Շուշիի շրջանում՝ 16.0հա եւ 14.4 տոկոս, Քաշաթաղի շրջանում՝ 245.0հա եւ 42.2 տոկոս:

Կատարված գարնանացանի 54.3 տոկոսը, կամ 614.2հա, կազմել է կարտոֆիլի, 26.7 տոկոսը կամ 302.3հա, հացահատիկային եւ հատիկաընդեղնային մշակաբույսերի 18.9 տոկոսը կամ 213.8հա բանջարեղենի ցանքատարածությունները:

Մեկ տարում ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամը արժեւորվել է 13,9%-ով

2008թ.-ի մարտին, 2007թ.-ի դեկտեմբերի համեմատ, Հայաստանում սպառողական գների եւ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է, համապատասխանաբար, 4,8% եւ 1,5%:

Ինչպես տեղեկացնում է ,Նոյյան տապանը, վկայակոչելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, 2008թ.-ի մարտին, փետրվարի համեմատ, հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 1,4% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0,01% նվազումով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 2% հավելաճին զուգընթաց, արձանագրվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1,6% նվազում: 2008թ.-ի մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 308,68 դրամ, ինչը 13,9%-ով ցածր է նախորդ տարվա մարտի համապատասխան ցուցանիշից (358,63 դրամ):

ՄԱՐՏԻՆ ՓԵՏՐՎԱՐԻ ՀԱՄԵՄԱՏ՝ 1.4 ՏՈԿՈՍ ԳՆԱՃ

Այսօրվա նիստում ԿԲ խորհուրդը բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.50%: Այս մասին տեղեկացանք ԿԲ մամուլի ծառայությունից:

Աղբյուրի հաղորդմամբ, մարտին փետրվարի նկատմամբ արձանագրվել է 1.4% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 9.6%՝ շուրջ 3 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա վերջում արձանագրված մակարդակից:

ԿԲ խորհուրդը հաստատեց, որ համաշխարհային շուկայում ձեւավորված բարձր գնաճային միջավայրն առաջին եռամսյակում շարունակել է ուժգնանալ՝ էապես անդրադառնալով պարենային ապրանքների ներքին գների վրա: Միաժամանակ, վերոհիշյալ զարգացումների երկրորդային ազդեցությունները սկսում են դրսեւորվել՝ հանգեցնելով ոչ պարենային ապրանքների գների եւ ծառայությունների սակագների բարձրացմանը:

ԿԲ-ի խորհուրդը համակարծիք է, որ առաջիկայում գնաճային ճնշումները պահպանվելու են եւ դրամավարկային պայմանների աստիճանական խստացումը նպատակ ունի մեղմելու գնաճային սպասումները եւ չեզոքացնելու նշված զարգացումների երկրորդային ազդեցությունները:

ԻՍԿ ԳՆԵՐՆ ԱՃՈՒՄ ԵՆ ՈՒ ԱՃՈՒՄ

Հայաստանի սննդամթերքի շուկայում 2008 թվականի մարտին, նույն թվականի փետրվարի համեմատ, գներն աճել են 2 տոկոսով: Այդ մասին տեղեկացնում է ԱՌԿԱ-ն, հղում անելով Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալին: Նույն ծառայության տվյալի համաձայն, տարվա սկզբից գները Հայաստանում աճել են 7,2 տոկոսով, իսկ 2007 թվականի մարտի համեմատ, սննդամթերքի շուկայի գնաճը կազմել է 14,6 տոկոս:

Վիճվարչության տվյալով, առավել նշանակալի գնաճ արձանագրվել է հացի, ալյուրի, կարագի եւ բուսական յուղի մասով: Այդ սննդամթերքները վերջին ամսվա ընթացքում թանկացել են 7,8 տոկոսով:

Մեկ տարում ՀՀ-ում բենզինը թանկացել է 14,6%-ով, դիզվառելիքը՝ 18,3%-ով

2008թ.-ի մարտին, փետրվարի համեմատ, հանրապետությունում գրանցվել է բենզինի եւ դիզելային վառելիքի, համապատասխանաբար, 0,7% եւ 3,1% գնաճ:

Ինչպես տեղեկացնում է «Նոյյան տապանը», վկայակոչելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, 2008թ.-ի մարտին, 2007թ.-ի մարտի համեմատ, բենզինի եւ դիզելային վառելիքի գնաճը կազմել է, համապատասխանաբար, 14,6% եւ 18,3%, իսկ 2005թ.-ի համեմատ, համապատասխանաբար, 4,7% եւ 19,7%:

2008-ի մարտին ծառայությունների սակագները Հայաստանում աճել են 1,1%-ով

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2008թ.-ի մարտին, փետրվարի համեմատ, գրանցված սակագների 1,1% հավելաճը հիմնականում պայմանավորվել է մշակույթի ոլորտի (1,1%), հանրային սննդի (1,1%), բուժսպասարկման (2,6%), իրավական ու բանկային ծառայությունների (13,5%) սակագների հավելաճով:

Ինչպես տեղեկացնում է ,Նոյյան տապանը, վկայակոչելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, կենցաղային բնույթի, կրթության համակարգի, հանգստի կազմակերպման, տրանսպորտի ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են 0,1-0,6%-ով, իսկ բնակարանային, կոմունալ, կապի ծառայությունների սակագները, նախորդ ամսվա համեմատ, մնացել են անփոփոխ:

ՍՐԻ ՈՒ ԽԱՉԻ ԴԱՇԻՆՔԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում վերջին շրջանի ներքաղաքական, հասարակական գործընթացներում հանրության բանավեճի թեմաներից մեկը դարձավ Հայ Առաքելական եկեղեցու տեղը եւ դերը նոր ժամանակներում: Փետրվարյան հանրահավաքների ժամանակ բազմիցս հիշատակվեց Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդների դիրքորոշումը Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Իր հերթին, մարտի 2-ին, հայտնի դեպքերի մասին Հայլուր ծրագիրը իր առաջին ռեպորտաժը սկսեց պախարակելով «քաղաքական աղանդավորականներին», իսկ մի քանի օր անց խորհրդարանում եւ իշխանամետ մամուլում հայտնվեցին տեսակետներ այն մասին, որ իբր աղանդավորականները քվեարկել են Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին:

Ակտիվորեն մասնակցելով Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզարշավին, իսկ մարտի 1-ի դեպքերից հետո զուսպ պաշտոնական դիրքորոշում որդեգրելով՝ Հայ Առաքելական եկեղեցին ցուցադրեց, որ փաստորեն հայտնվել է «բարիկադների» մի կողմում եւ ակնկալում է համապատասխան վերաբերմունք իշխանություններից:

Հայաստանի իշխանության համար ակնհայտ է, որ ՀՀԿ դավանած նժդեհականությունը հանրային ընկալման տեսակետից բավական անհասկանալի ու «անկիրառելի» գաղափարախոսություն է, իսկ ահա եկեղեցու գործոնը կարող է հենարան հանդիսանալ ղեկավարման համար: Իհարկե, կարելի էր կարծել, որ Հայաստանում ստեղծված ներքաղաքական որակապես այլ իրավիճակի պայմաններում իշխանությունը պետք է գնար ժամանակակից իրողություններին համարժեք լուծումների ճանապարհով, այդպիսով ինքն էլ համարժեք դառնալով ստեղծված իրողություններին: Սակայն կատարվեց այն, ինչ թերեւս պետք է կատարվեր: Նորից հաստատվեց պատմական այն պարզ ճշմարտությունը, որ մարդկանց տիրելու համար նախ պետք է գերել նրանց հոգիները: Ցանկացած ռեժիմ պետք է ունենա իր հենարանը, որը հասարակության աչքում իրեն լեգիտիմացնի եւ ապահովի կապը հասարակության լայն հատվածի հետ: Հայաստանում հաստատված համակարգի պայմաններում, երբ իշխանությունը փաստացի չունի հենարան հանրության լայն շերտերի մեջ եւ սպառել է նրա հետ երկխոսության բոլոր հնարավորությունները, թվում է Հայ Առաքելական եկեղեցին այս խնդրի ապահովման գործում այլընտրանք չունի: Եկեղեցու այս կարգի հարուստ պատմական փորձը նորից պահանջարկ է սկսել վայելել: Քաղաքական, իրավական, բարոյական, սոցիալական առկա հիմնախնդիրները պետք է տեղափոխել այլ դաշտ: Ամենահարմար դաշտը իհարկե ազգայնականությունն է: «Հանուն ազգի» ցանկացած անօրինակություն կարելի է արդարացնել:

Որոնք են այն հիմնական հատկությունները, որոնք միավորում են եկեղեցուն եւ Հայաստանում ձեւավորված ներկայիս համակարգին: Դրանք են՝ ստվերային տնտեսությունը, ամբողջատիրական հակումները, մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանափակումը եւ այլն: Միայն ձեռք-ձեռքի տալով է հնարավոր պահպանել նման արտոնյալ վիճակը: Եթե ներկայիս ձեւավորված համակարգի այս հատկություններն անթաքույց են, ապա Եկեղեցու մասին նման քննարկումները հասկանալի պատճառով հազվադեպ են լինում:

Այն, որ փորձ է արվում կառուցել ամբողջատիրական կարգեր՝ երկարացնել հատուկ դրությունն առանձին՝ մարդու իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրենքներում հակասահմանադրական փոփոխություններ կատարելու միջոցով, բոլորին է ակնհայտ, սակայն մենք չենք նկատում, որ կատարյալ ամբողջատիրական կարգեր են վաղուցվանից տիրում Հայ եկեղեցում: Ըստ էության, եկեղեցին ենթարկվում է միայն մեկ մարդու: Նա կարող է միանձնյա որոշումներ կայացնել, վարել իրեն հաճո ցանկացած քաղաքականություն եւ իրականացնել ցանկացած տիպի բիզնես ծրագրեր: Նա կարող է միանձնյա կարգալույծ անել ցանկացած հոգեւորականի, եւս իր ցանկությամբ, առանց որեւէ մարմնի առջեւ հաշվետու լինելու: Այսինքն Հայ եկեղեցու հոգեւորականը ոչ միայն իրավազուրկ է որպես Հայաստանի շարքային քաղաքացի, այլեւ կրկնակի իրավազուրկ է նաեւ որպես հոգեւորական: Չի կարող բողոքով դիմել ոչ մի ատյանի, լինի դա եկեղեցու մեջ, թե դուրս:

Հայտնի է, որ եթե հասարակությունը մի ոլորտում ընդունելի է համարում անհանդուրժողականությունը, ապա վաղ թե ուշ անհանդուրժողականությունը տարածվում է նաեւ մյուս ոլորտների վրա: Եթե մենք համարում ենք, որ կրոնական կազմակերպությունները պետք է հալածվեն, նրանց համարում ենք աղանդներ, ապա աղանդներ կարող են համարվել քաղաքական կուսակցություններ, ՁԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ եւ այլն, ուղղակի այդ ամենը պետք է մատուցել «ճիշտ համեմունքի» հետ:

Իրոք, եկեղեցին այն մոդելն է, որն իր մեջ իրականացրել է այն ամենը, ինչի մասին չեն կարող անգամ երազել Հայաստանի իշխանությունները: Եկեղեցին խորը միջնադարից սկսած չի վերափոխել իր էությունը, համարվում է ազգային կառույց, որը քննադատությունից վեր է, ունի օրենքով ամրագրված արտոնություններ: Իրոք, կատարյալ կարգավիճակ: Մնում է այս հաջողված փորձը տարածել ողջ Հայաստանով մեկ: Արդյոք կարող է իշխանությունը լուծել այս խնդիրը՝ համարվել ազգային արժեք, որին նույնպես բոլորը պետք է ենթարկվեն: Պարզ է, որ առանց եկեղեցու օգնության դա անհնար կլինի:

Մինչ այս պահը անկախ Հայաստանի նախագահների երդման արարողությունները օծում էին կաթողիկոսները, դրանով տուրք տալով եկեղեցու պատմական դերակատարությանը, այս անգամ այս ամենը այլ երանգ է ստանում:

Այսպիսով, վիճակն արդեն գցված է: Եկեղեցին մուտք է գործել քաղաքականություն եւ այլեւս նահանջի տեղ չունի: Կամ ներկա իշխանությունների հետ համատեղ ունենալու է անսահման իրավունքներ եւ լիազորություններ, կամ գլորվելու է դեպի «սովորական» եկեղեցու կարգավիճակը:

ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԲ ԴԻՄԱՑԻՆԴ ՔԱՂԱՔԱՑԻ Է, ԵՎ ՈՉ ՍՊԱՌՈՂ

Հայաստանի ներքին լարված իրադրության հաղթահարման երկու ճանապարհ կա՝ մեկը ռեպրեսիաների միջոցով, քաղաքացիների ազատությունների սահմանափակումով ցանկացած այլախոհություն, այլակարծություն դրսեւորման հնարավորությունից զրկելն է, մյուսը՝ վարվող քաղաքականության միջոցով հասարակական դժգոհությունը մեղմելը, հնարավորինս չեզոքացնելը: Այսօր Հայաստանում կարելի է շատերից լսել այդ բանաձեւը, որպես իրավիճակի հաղթահարման երկու ճանապարհ, երբ երրորդը ոչ միայն բացառվում է, ոչ միայն ավելորդ է, այլ կարծես թե ընդհանրապես չկա: Իրականում սակայն, այդ տեսակետը փոքր ինչ չափազանցված է: Ներկայիս իրավիճակից դուրս գալու ընդամենը մեկ ելք կա, քանի որ քաղաքացիական ազատությունների սահանափակումն ամենեւին էլ ելք չէ, որին կարող է դիմել իշխանությունը: Մարդիկ մի գուցե ցույցեր չանեն, մի գուցե երթեր չանեն, մի գուցե վաղը դադարեն զբոսնել, եթե անգամ Ագոն տուն առնի Հյուսիսային պողոտայում, մի գուցե հնարավոր լինի գտնել ինչ որ միջոց զորքը Երեւանի կենտրոնում հավերժ պահելու համար, մի գուցե հնարավոր լինի փակել բոլոր այն լրատվամիջոցները, որոնք իշխանականից բացի այլ կարծիք ու տեղեկություն են տարածում: Այդ ամենը միանգամայն հնարավոր է, թեեւ շատ դժվար պատկերացնելի, եթե մարդը քիչ թե շատ ադեկվատ է 21-րդ դարին: Բայց ահա մարդկանց արգելել մտածել՝ ուղղակի անհնար է թե գործնականում, թե նույնիսկ տեսականորեն: Իսկ եթե մարդը մտածեց, ապա միտքը վաղ թե ուշ ինչ որ բան ծնելու է, ինչ որ մարմին է առնելու, ինչ որ ձեւ է ստանալու, հետո ձեւը դառնալու է ինչ որ բովանդակություն, իսկ բովանդակության դեմ անբովանդակ պայքարը, ինչիսին որ հանդիսանում է ռեպրեսիան, ժամանակավոր էֆեկտ գուցե եւ կտա, բայց ինքնին անարդյունավետ է ու երկարաժամկետ առումով կարող է կանգնեցնել շատ ավելի անցանկալի հեռանկարի առաջ:

Թվում է, որ այդ պարզ իրողությունը, ի տարբերություն իշխանամերձ կամ ոչ այնքան, քաղաքական գործիչների, որոնք իրավիճակի մասին իրենց գնահատականներով ու առաջարկներով առավելապես լուծում են սեփական գոյության նյութական իմաստավորման հարցը, իշխանությունը պետք է որ ավելի վաղ եւ ավելի հստակ պատկերացնի ու գիտակցի: Ասում են, որ էքստրեմալ իրավիճակներում մարդու զգայարանները աշխատում են առավելագույն հնարավորության չափով, եւ անգամ անում են անհնարինը: Դժբախտաբար, մեր իշխանության մոտ կարծես թե ոչ բոլոր զգայարաններն են անում հնարավորն ու անհնարը: Դա են վկայում իշխանության ներկայացուցիչների հայտարարություններն ու մեկնաբանություններն առկա վիճակի կապակցությամբ, որոնց հիմնական լեյտմոտիվն այն է, որ ի դեմս Լեւոն Տեր-Պետրոսյանի կազմակերպած ցույցերի, մենք գործ ունեինք մի սոված ու անկիրթ ամբոխի հետ, որը չէր հասկանում, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ինչ որ արտաքին պատվեր էր կատարում, Հայաստանում իրավիճակը տանում էր բախման, երկիրը թուլացնելու, պետական հեղաշրջում իրականացնելու եւ այլն, եւ այլն, եւ էլի այդպիսի բաներ:

Լեւոն Տեր-Պետրոսյանին, իր գործողությունների ու նպատակների համար, ինչպես որ իշխանությանն ու ընդհանրապես՝ յուրաքանչյուրիս, դատավոր է Աստված: Եթե նա ունեցել է այդ նպատակները, ինչը դեռ պետք է ապացուցել, ոչ թե պարզապես կարծիքների մակարդակով հանրությանը մատուցել որպես բացարձակ իրողություն, ապա կասկածից վեր է, որ եթե անգամ խուսափի երկրային պատասխանատվությունից, ապա երկնայինը կլինի անխուսափելի: Այդպես է յուրաքանչյուրիս դեպքում: Խնդիրն այստեղ հասարակությունն է, այն մասը, որը մասնակցում էր Լեւոն Տեր-Պետրոսյանի այդ «հակապետական» գործողություններին: Ինչպես կարելի է չնկատել սեփական ժողովրդին, ինչպես կարելի է չնկատել սեփական հանրահավաքից դեպի Լեւոն Տեր-Պետրոսյանի հանրահավաքը գնացող քաղաքացիներին, ինչպես կարելի է նրանց անվանել ամբոխ ու կարծել, թե ինչպես որ անվանես, այդպիսին էլ նրանք կդառնան: Ինչպես կարելի է այդ ամենից հետո, ինչ տեղի ունեցավ Հայաստանում, չհասկանալ, որ Հայաստանում խնդիրն ամենեւին հացը չէ, պիցցան չէ, քաբաբը չէ, ինչպես կարծում են այդ իշխանական փոքր ու միջին գործիչները, անկասկած խոշորների լուռ հովանավորությամբ: Ինչպես կարելի է չհասկանալ, որ եթե իշխանությունը հանրահավաքի գնացող մարդկանց ավելի շատ ու ավելի ձրի պիցցա կամ քաբաբ տա, միեւնույն է, մարդիկ կրկին գնալու են հանրահավաքի, դուրս են գալու փողոց, կամ առնվազն մտածելու են, որովհետեւ նրանք հաց չէ, որ որոնում են Հայաստանում, այլ արդարություն եւ օրինականություն, ու դրա համար նրանք պատրաստ են իրենց ձեռքի «գործիք» դարձնել յուրաքանչյուրին: Դրա համար մթի, ցրտի ու սովի ուրվականներով հեռուստաթերթերը լցնելու ու հանրությանը վախեցնելու փորձերը մատնվեցին կատարյալ անհաջողության, որովհետեւ մարդկանց մութն ու ցուրտը չի սարսափեցնում, այլ այն, որ իրենց կամ իրենց զավակին էլ մի օր կարող է ինչ որ մի գեներալի որդի ծեծելով սպանել, եւ ոչ ոք պատասխան չի տա դրա համար: Քանի դեռ իշխանությունը չի հասկացել այդ պարզ իրողությունը, քանի դեռ Հայաստանի բնակչության մեջ չի տեսել քաղաքացուն, այլ նկատել է միայն սպառողին, անկարող է լինելու դուրս գալ փակուղային վիճակից: Եվ նաեւ, երեւի թե շատ կարեւոր է, որ իշխանությունը հասկանա եւս մի բան՝ սարսափելին իշխանություն կորցնելու վտանգը չէ, այլ այն, որ չես պատկերացնում քեզ առանց իշխանության:

ՀԱԿՈԲ ԲԱԴԱԼՅԱՆ. «ԼՐԱԳԻՐ», 02.03.08

Եվրոդատարանը չեղյալ է հայտարարել PKK-ն ահաբեկչական կազմակերպություն համարելու որոշումը

Եվրամիության երկրորդ գերագույն դատական ատյանը այսօր չեղյալ է հայտարարել Քուրդիստանի աշխատավորական կուսակցությունը (PKK) եւ դրա քաղաքական թեւը ահաբեկչական կազմակերպությունների ցանկում ընդգրկելու որոշումը:

Դատարանի վճռի համաձայն՝ PKK-ն այդ ցանկում ընդգրկելու եւ կազմակերպության ակտիվները սառեցնելու մասին ավելի վաղ ընդունված որոշումը չի համապատասխանում Եվրամիության օրենքներին:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՀԱՆԳՍՏԱՑՐԵԼ Է ԹՈՒՐՔԵՐԻՆ

«Panorama.am», 02.04.08: «Բարաք Օբաման շատ լավ է գիտակցում Թուրքիայի նշանակությունը, նա հավատում է Իրաքի քաղաքականության հարցում տարածաշրջանի հարեւանների եւ դաշնակիցների հետ ավելի շատ եւ ավելի լավ աշխատելու անհրաժեշտությանը: Շատ լավ է գիտակցում Թուրքիայի նշանակությունը: Հավատում է նաեւ նախկինի պես Միացյալ Նահանգների եւ Թուրքիայի միջեւ լավ հարաբերությունների եւ համագործակցության հաստատման անհրաժեշտությանը: Մենք հավատում ենք Թուրքիային եվրաինտեգրման հարցում ավելի շատ աջակցելու եւ նրա՝ ԵՄ լիիրավ անդամ դառնալու անհրաժեշտությանը: Եվրոպան անպայման պետք է ընդունի Թուրքիային»,- այս մասին թուրքական «Միլլիյեթե օրաթերթին տված հարցազրույցում հայտարարել է ԱՄՆ-ի նախագահի թեկնածության համար պայքարող դեմոկրատ սենատոր Բարաք Օբամայի խորհրդականներից Դենիս Մքդոնուն:

Հիշեցնենք, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը քննադատել էր ԱՄՆ Դեմոկրատական կուսակցությունից նախագահության թեկնածության համար պայքարող Բարաք Օբամային այն պատճառով, որ վերջինս խոստացել է նախագահ դառնալու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Թուրքիայի վարչապետը Օբամային մեղադրել էր «քաղաքական անփորձության մեջ» եւ հայտարարել, որ «բոլորը շատ լավ գիտակցում են, որ եթե ընդունվի հայկական օրինագիծը, ապա Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների հարաբերությունները կարող են կրել անվերականգնելի վնասներ»:

ԱՄՆ-ը Ադրբեջանի ռազմավարական գործընկերն է եւ պաշտպանում է այդ երկրի տարածքային ամբողջականությունը

Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Էնն Դերսին «Թրենդ»-ին հայտարարել է, որ ԱՄՆ-ը «պաշտպանում է դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը եւ հանդես է գալիս դրա շուտափույթ լուծման օգտին»: Ընդսմին դիվանագետը նշել է, որ ԱՄՆ-ը Ադրբեջանի ռազմավարական գործընկերն է եւ պաշտպանում է այդ երկրի տարածքային ամբողջականությունը:

Վաշինգտոնը եւ Պրահան համաձայնեցին ամերիկյան հակաօդային պաշտպանության համակարգ տեղակայել Չեխիայում

Վաշինգտոնը եւ Պրահան ապրիլի 3-ին Բուխարեստում համաձայնության եկան Չեխիայի տարածքում ամերիկյան հակաօդային պաշտպանության համակարգի տեղակայման հարցում:

Համատեղ հայտարարության մեջ ասված է. - «Այս պարտավորեցնող համաձայնությունը միտված է Չեխիայում ամերիկյան ռադարի տեղակայմանը՝ բալիստիկ հրթիռներին հետեւելու համար: Ռադարը միացված կլինի ԱՄՆ-ում եւ Եվրոպայում գտնվող ամերիկյան հակաօդային պաշտպանության այլ համակարգերին»:

ԱՄՆ-ի պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի հետ հանդիպելուց հետո Չեխիայի արտգործնախարար Կարել Շվարցենբերգը լրագրողներին ասել է, որ այս պայմանավորվածությունն ամրագրող համաձայնագիրը, հավանաբար, կստորագրվի մայիսի սկզբին:

Արեւմտյան գործակալությունները փաստում են, որ այս գործարքը առաջացնելու է Ռուսաստանի վրդովմունքը: Մոսկվան բազմիցս է հայտարարել, որ ամերիկյան համակարգերի տեղակայումը Արեւելյան Եվրոպայում դիտում է որպես սպառնալիք իր անվտանգությանը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ՆԱՏՕ-ի անդամ երկրների առաջնորդների հետ կհանդիպի վաղը:

Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավորը կարեւորել է թյուրքական աշխարհի միավորումը

ԲԱՔՈՒ, 1 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի միասնական ժողովրդական ճակատ կուսակցության նախագահ, Միլի մեջլիսի պատգամավոր Հուդրաթ Հասանղուլիեւը հայտարարել է, որ թյուրքական աշխարհի միավորումն անհրաժեշտ է ստեղծել Թուրքիայից եւ Ադրբեջանից:

Ըստ նրա՝ Թուրքիան եւ Ադրբեջանը ավելի մոտիկ են միավորման գործընթացին: «Ես վստահ եմ, որ դրանից հետո միավորմանը կհարեն նաեւ Միջին Ասիայի երկրները: Այդ անելով՝ մենք մնացած ողջ աշխարհին կստիպենք հաշվի նստել թյուրքական աշխարհի հետ»,-ասել է ադրբեջանցի պատգամավորը:

Նրա կարծիքով՝ «թյուրքական աշխարհը շատ մեծ ներուժ ունի՝ շահավետ աշխարհագրական դիրք, հարուստ էներգառեսուրսներ եւ այլն»: «Ընդսմին բաց թողնված յուրաքանչյուրն օրն ու ժամը չեն համապատասխանում մեր շահերին: Թյուրքական աշխարհի միասնության հասնելու դեպքում Եվրոպան նույն Թուրքիային կաղերսի մտնելու Եվրամիություն»,-հայտարարել է Միլի մեջլիսի պատգամավորը:

Մեծ հույսերի եւ մեծ աղմուկների գագաթնաժողովը

Բուխարեստի գագաթնաժողովը, վերջին հաշվով, ենթադրում է հարցերի դիտարկում ռուս-ամերիկյան փոխհարաբերությունների համատեքստում: Բուխարեստում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը տեղի է ունենում Չաուշեսկուի պալատում, որը ամենամեծ շինությունն է Եվրոպայում եւ երկրորդը աշխարհում՝ Պենտագոնից հետո:

Ռուսաստանի համար իսկապես շատ բարդ խնդիր է Ուկրաինայի ինտեգրվելը ՆԱՏՕ-ին: Հաճախ մոռանում են, որ Ռուսաստանը ռազմական հանդերձանքի մեկ երրորդը գնում է Ուկրաինայի գործարաններից: Բացի այդ՝ Մոսկվային անհանգստացնում են հետեւանքները՝ կապված ռուսական Սեւծովյան նավատորմի հետ. Սեւաստոպոլը գտնվում է Ուկրաինայի տարածքում: Մոսկվայի կարծիքով՝ Վրաստանի մուտքը ՆԱՏՕ եւս բացասաբար կանդրադառնա տարածաշրջանի կայունության վրա. նկատի ունենք մասնավորապես Աբխազիան եւ Հարավային Օսեթիան, որոնք սերտ կապեր ունեն Ռուսաստանի հետ: Կրեմլին մոտ կանգնած փորձագետը հետեւյալ դիտարկումն է անում. ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցելուց հետո աբխազ-վրացական սահմանում հակամարտությունը կխորանա, եւ Վրաստանն այդ առնչությամբ կարող է մեղադրել Ռուսաստանին, նա հարց է առաջ քաշում՝ միգուցե հինգերորդ հոդվածը կկիրառվի՝ ի նկատի ունենալով ՆԱՏՕ-ի պայմանագրի դրույթը, համաձայն որի՝ մի երկրի վրա հարձակումը հավասարազոր է դաշնակիցների վրա հարձակման: Գերմանիան գտնում է, որ յուրաքանչյուր անգամ, երբ խոսքը վերաբերում է նախկին խորհրդային հանրապետությունների՝ դաշինքին միանալուն, վատանում են հարաբերությունները Ռուսաստանի հետ: Մինչդեռ ամերիկացի դիվանագետները այլ դիրքորոշում են ներկայացնում. նախ՝ մարտին Բուշը Պուտինին առաջարկել է ռազմավարական նոր մոտեցում, ինչը նախեւառաջ վերաբերում է Եվրոպայում հակահրթիռային համակարգերի տեղակայմանը, երկրորդ՝ ամերիկացի դիվանագետները որպես օրինակ բերում են մերձբալթյան հանրապետությունները, որոնք ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո բարելավեցին Ռուսաստանի հետ հարաբերությունները. այժմ այդ հարաբերությունները ավելի խաղաղ են, ավելի ռազմավարական եւ, ինչու ոչ, բարելավվել են նաեւ առեւտրական իմաստով, այնպես որ՝ «Մոսկվան պետք է դադարի «ՆԱՏՕ» անունը իբրեւ հայհոյանք ընկալել», - կարծիք է հայտնում ամերիկացի փորձագետը: Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին հայտարարել է, որ եթե Վրաստանի եւ Ուկրաինայի հայցերը մերժվեն՝ դա Ռուսաստանին վետոյի իրավունք կտա, եւ Մոսկվան կխրախուսվի: Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոն ՆԱՏՕ-ին անդամակցելը համարում է Ուկրաինայի ինքնիշխանության խնդիր: «Վերջին 80 տարիների ընթացքում Ուկրաինան հինգ անգամ անկախություն է հռչակել, չորս անգամ մենք այն կորցրել ենք: Ինչո՞ւ մենք կորցրինք մեր ինքնիշխանությունը... Որովհետեւ մենք անվտանգության միջազգային երաշխիքներ չունեինք», - հայտարարել է նա անցյալ շաբաթ արտերկրի լրագրողներին:

Յուշչենկոն հերքում է կանխագուշակումներն այն մասին, որ Ուկրաինայում կարող են արտերկրի ռազմական հենակայաններ ի հայտ գալ, քանի որ դա կհակասի երկրի Սահմանադրությանը: Ամեն դեպքում ՆԱՏՕ-ի կազմի մեջ Ուկրաինայի մուտքի առնչությամբ Յուշչենկոն դրական ազդանշանների ակնկալիքներ ունի: Վրաստանի նախագահի կարծիքով՝ խնդրի ձախողման դեպքում անգամ գործընթացը անշրջելի է եւ օրակարգում կդրվի մեկ-երկու տարի հետո: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դը Հոոպ Սխեֆերը երկուշաբթի հայտարարել է, որ ինչ որոշում էլ կայացվի Բուխարեստում՝ վաղ թե ուշ Ուկրաինան եւ Վրաստանը կմտնեն ՆԱՏՕ: Ստեփան Սաֆարյանը կարծում է, որ ԱՄՆ-ն բացահայտ աջակցում է Վրաստանին եւ Ուկրաինային ՆԱՏՕ-ին ինտեգրվելու առնչությամբ: «ՆԱՏՕ-ի շրջանակներում ԱՄՆ-ն բարձր ձայն ունեցող երկիր է եւ Վրաստանին ու Ուկրաինային դրական պատասխան տալու դեպքում ԱՄՆ-Ռուսաստան փոխհարաբերությունների հաշվեկշիռը խախտվելու է: Ինչ վերաբերում է այս հարցում եվրոպական դիվանագիտությանը, թե հակասություն կա Եվրոպայի եւ ԱՄՆ-ի միջեւ, ապա սա Եվրոպայի նուրբ դիվանագիտության դրսեւորումն է, քանի որ նրանք սահմանամերձ են: Եվրոպայի դիվանագիտությունը հետապնդում է ռուսական ռազմատենչ հռետորությունը նվազեցնելու խնդիր: Սրա վկայությունը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դը Հոոպ Սխեֆերի հայտարարությունն էր այն մասին, որ Մյունխենը չպետք է կրկնվի եւ անընդունելի կլինեն սառը պատերազմի ժամանակներին բնորոշ հայտարարությունները, այսինքն՝ ՆԱՏՕ-ի այս գագաթնաժողովում կլսվի ավելի զուսպ հայտարարություն: Ասել է թե՝ Արեւմուտքը բազմախոս քաղաքականություն է վարում», - ասում է Ստեփան Սաֆարյանը:

- ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունը ի՞նչ ազդեցություն կունենա Հարավային Կովկասի տարածաշրջանում:

- Էական: Կմեծանա ՆԱՏՕ-ի քաղաքական եւ ռազմական ներկայությունը, ինչը կազդի ռուս-վրացական, վրաց-հայկական հարաբերությունների վրա: Ռուսաստանը կճանաչի Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի ինքնիշխանությունը: Այս խնդրին փոխկապակցված է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը:

- Ռուսաստանի Դաշնության Պետդուման, երբ քննարկեց Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հիմնախնդիրները, Լեռնային Ղարաբաղը բացառեց նրանց շարքից:

- Ռուսաստանը որքան էլ չքննարկի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ առկա է հարցի ռիսկայնությունը: Այսինքն՝ հայտարարեցին, թե Կոսովոն նախադեպ չի կարող լինել նմանօրինակ մյուս խնդիրների կարգավորման համար, սակայն ի՞նչ ստացվեց՝ նախադեպ դարձավ: Գործընթացները այսպես թե այնպես առնչվում են: Միջազգային իրավունքի տարածքային ամբողջականության սկզբունքը խախտելը արդեն անուղղակիորեն ազդում է նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վրա: Սցենարների բազմաբնույթ դրսեւորումների վրա գործոն են հայ դիվանագիտության ճկունությունը, հարցը ԵԱՀԿ-ի շրջանակներից տեղափոխելու Ադրբեջանի միտումը:

շար՝ էջ 15

Վիլյամ Սարոյան-100

ԻՆՉՊԵՍ ՆԿԱՐԵՑԻ ՍԱՐՈՅԱՆԻՆ

Փոլ Կալինյանի փորձառությունը

«1964-ին, Ֆրեզնո տեղափոխվելուց հետո, մեջս մեծ տենչանք կար ծանոթանալու Վիլյամ Սարոյանի հետ: Իբրեւ լուսանկարիչ ցանկանում էի մոտիկից ճանաչել մեր հռչակավոր հայորդուն, նկարել նրա հանճարեղ դեմքը՝ բնական զգացումներով: Սակայն այնպես էր թվում, թե Սարոյանը լուսանկարչական ապարատի առջեւ դիրք ընդունելուն դեմ է: Սարոյանին գտնելու բազմաթիվ ապարդյուն փորձերից հետո, վերջապես առիթ ստեղծվեց նրան հանդիպելու՝ 12 տարի նրան հետապնդելուց հետո: Սարոյանին նկարելու կարելիութեան մասին մի օր զրուցում էի բարեկամիս՝ քանդակագործ Վարազ Սամվելյանի հետ: Քանի որ նա Սարոյանի բարեկամն էր, գաղափար հղացա լուսանկարչական գործիքներս տեղավորել վերջինիս արվեստանոցում այն ակնկալությամբ, թե այդպես կհաջողեի նկարել Սարոյանին: Ուրախացա, երբ Վարազը հավանություն տվեց այդ գաղափարին:

1976-ի մարտի 26-ը հիշատակելի օր էր, որովհետեւ այդ օրը Վարազը հեռաձայնեց ինձ ասելու, որ Սարոյանը Ֆրեզնոյում է ու հավանաբար կայցելի իրեն: Անմիջապես գնացի Վարազի արվեստանոց, որը գտնվում էր Ֆրեզնոյի կենտրոնում, եւ արագ տեղավորեցի լուսանկարչական գործիքներս:

Մի քանի ժամ անց Սարոյանը հասավ հեծանիվով: Անավարտ քանդակների հետեւում կանգնած ուշադրությամբ զննում էին նրան, բավականին հուզված ու սպասողական վիճակում: Մինչ Սարոյանն ու Վարազը հայկական ոճով բարձրաձայն ողջագուրվում էին ու ջերմորեն համբուրվում, ես կանգնել էի նրանցից քիչ հեռու: Սարոյանն ինձ նկատեց, բայց ուշադրություն չդարձրեց վրաս:

Առանց ժամանակ կորցնելու, ձեռքս երկարեցի եւ անգլերեն խոսելով ներկայացա որպես լուսանկարիչ: Հետո խնդրեցի, որ թույլ տա իրեն լուսանկարել:

- Կորսվե՛ ... - ասաց Սարոյանը:

- Բայց պրն. Սարոյան, ես...

Փորձեցի բացատրել, սակայն ձայնս խեղդվեց իր դղրդալից պատասխանի մեջ:

- Ո՛չ ըսի, ականջդ ծա՞նր է, ի՞նչ է... Ո՛րեւէ նկար չեմ ուզեր, - բղավեց Սարոյանը:

- Բայց ինչո՞ւ , - հարցրեցի մեղմ ձայնով:

Աչքերիս մեջ շիտակ նայելով պատասխանեց.

- Չե՛մ ուզեր, որ նկարս քաշես... մոռցի՛ր: Հետո Վարազին դառնալով ասաց - Ո՞վ է աս մարդը: Ինչո՞ւ ա՛յսքան կը պնդե:

- Վիլի, Փոլը ընկերս է եւ լա՛վ լուսանկարիչ է, - ասաց Վարազը:

Մի պահ Սարոյանի ուշադրությունը շեղվեց Վարազի արվեստի զանազան գործերի վրա: Գլխով նշան արեցի Վարազին ու ցածր ձայնով փսփսացի ականջին.

- Վարազ... լաւ մտիկ ըրե... զինքը առաջնորդե դեպի արվեստանոցդ, ուր իմ գործիքներս տեղավորած եմ:

- Օքեյ... օքեյ... - ասաց Վարազը:

Կես ժամ հետո, երկուսով արվեստանոց մտան: Սարոյանն անմիջապես նկատեց ինձ, երբ լույսերն էի փորձում: Տհաճության եւ անհանգստության արտահայտություն երեւաց դեմքին:

- Դուն նկա՞րս կը քաշես,- բացականչեց Սարոյանը:

- Ո՛չ, պրն Սարոյան, լույսերս կը փորձեմ: Գործիքիս մեջ ֆիլմ նույնիսկ չկա:

Ավելի մոտեցավ ու խնդրեց, որ լուսանկարչական ապարատս բանամ: Երբ բացեցի ու ցույց տվեցի պարապ ֆիլմակալը, վերջապես հանգստացավ ու նստեց սնդուկանման մի սեղանի վրա, որի ճիշտ առջեւը դրված էին գործիքներս: Առանց նրան ասելու, նախապես լցրել էի ֆիլմակալս եւ արագորեն կպցրեցի գործիքիս: Ինչքան ժամանակն անցնում էր, այնքան վստահելի էի դառնում Սարոյանի համար: Սկսեց հետաքրքրվել ինձնով, խնդրեց, որ հայերեն խոսեմ ու պատմեմ ծննդավայրիս՝ Լիբանանի հայերի մասին: Հայերեն առինքնող ջերմ զրույցի ընթացքում բազմաթիվ գաղտնի լուսանկարներ արեցի:

Հետո Սարոյանը խնդրեց, որ հայկական մի հին երգ երգեմ՝ Կիլիկիան: Այս երգը միասին երգելով ավելի հուզվեցինք: Նրա համար դժվար էր զսպել աչքերի մեջ լցվող արցունքները:

- Քեզ հավնեցա, Փոլ,- ասաց Սարոյանը, - հիմա ուզածիդ չափ կրնաս նկարս քաշել: Նախքան այդ ազնվությունն արտահայտելն արդեն բավականին լուսանկարել էի նրան՝ առանց իր ուշադրությունը գրավելու:

Երկու շաբաթ անց Սարոյանը արհեստանոցս եկավ հեծանիվով: Պատից կախված իր դիմանկարներից մեկին նայելով, ասաց.

- Դեմքս այդպիսի արտահայտութեան մեջ երբեք չեմ տեսած...

Բարձրաձայն խնդաց, հետո գրպանից հանեց իր գրքերից մեկը՝ «Մի՛ գնա, բայց եթե գնում ես, բարեւիր բոլորին» վերնագրով ու մակագրեց «Փոլ Կալինյանին՝ մեծ լուսանկարիչ - արվեստագետին համար: Անկեղծորեն, Ուիլիըմ Սարոյան, Ֆրեզնո, 8 ապրիլ, 1976»: Գիրքը տվեց ինձ, նստեց հեծանիվն ու գնաց:

Մեր բարեկամությունը արմատացավ ու շուտով մտերմացանք:

Այնուհետեւ բազմաթիվ հանդիպումներ ունեցանք աշխատանոցիս մեջ: Հիշատակելի էին մեր անցկացրած պահերը, երբ միասին թեյ էինք խմում եւ հայերի մասին զրուցում: 12 տարի նրան հետապնդելուց հետո, մեր բարեկամությունը տեւեց 5 տարի, մինչեւ Սարոյանի մահը՝ 1981: «Շնորհակալ եմ, Վարազ, որ զիս ծանոթացուցիր Ուիլիըմ Սարոյանին», գրել է «Վիլյամ Սարոյան. Գրողը, Մարդը» վավերագրական ֆիլմի հեղինակ Փոլ Կալինյանը:

Սարոյանի հետ նրա առաջին հանդիպման ժամանակ որեւէ մեկի մտքով չի անցել, որ տարիներ անց նա կստեղծի Սարոյանի կյանքին ու գործին նվիրված մեկժամանոց վավերագրական ֆիլմ, որն իր հերթին կարժանանա բազում մրցանակների: Ոչ ոք չի պատկերացրել, որ 15 տարի անց Սարոյանի այդ լուսանկարները կհայտնվեն Մ.Նահանգներում ու ԽՍՀՄ-ում նրա հիշատակին հրատարակված ալբոմներում, գրքերում, դրոշմանիշների վրա:

շար՝ էջ 15

սկիզբը՝ էջ 14

Իր հաստատամտությամբ ու համառությամբ Կալինյանը շահում է Սարոյանի վստահությունը եւ երկար տարիներ լուսանկարչական ապարատը ձեռքից վայր չդնելով հետեւում է նրան, իմաստուն ու ջինջ նրա կերպարանքը դրոշմելով կինոժապավենի վրա:

Սարոյանի մահվանից հետո այդ դիմանկարների ու նկարահանումների մասին գրվում է աշխարհի տարբեր լրագրերում, պարբերականներում: Մարդիկ ամենուրեք հետաքրքրվում են դրանցով: Կալինյանը պատրաստում է 10 վայրկենանոց սլայդների ցուցադրություն՝ «Ինչպես նկարեցի Սարոյանին» վերնագրով: Յուրաքանչյուր ցուցադրությունից հետո նա ավելի է խանդավառվում եւ որոշում է Սարոյանի 12 վայրկյանանոց մենախոսությանն ավելացնել «Ֆրեզնոյում մեծանալը» խորագիրը:

Ստեղծագործական ութ տարիների ընթացքում դստեր՝ կինոբեմադրիչ Սյուզի Կալինյանի հետ երջանիկ առիթներ է ունենում ավելի մոտիկից ճանաչելու Սարոյանի մարդկային նկարագիրը, կենսափիլիսոփայությունը, ձգտելով այդ ամենն անմահացնել ֆիլմում: Նրանք հավաքում են որոշ նյութեր նաեւ Հայաստանից, բազմաթիվ խոչընդոտներից հետո նրանց են հասնում հայրենիքում նկարահանված կադրերը: Ձգձգվող դժվարություններից հետո նրանց հաջողվում է 1991թ-ին ավարտել 1 ժամ տեւողությամբ «Վիլյամ Սարոյան. Մարդը, Գրողը» վերնագրով անգլերեն վավերագրական ֆիլմը (հայերեն ենթագրերով):

Ֆիլմը պատմում է Սարոյանի կյանքի ու ստեղծագործության, նրա էության ու նկարագրի, փիլիսոփայության ու պատգամների մասին: Սարոյանն արտահայտում է իր սերը հայրենի երկրի հանդեպ, խոսում է հայկական մշակութային ժառանգության եւ իր ստեղծագործական կյանքի վրա դրա թողած ազդեցության մասին՝ իր խոսքում մերժելով դրամը, համբավն ու փառքը:

Մեծ գրողի կյանքի պատմությունը սկսվում է 1900-ականների Ֆրեզնոյից մինչեւ 1981թ: Առաջին կադրերում Սարոյանը խոսում է իր անցյալի մասին, իսկ հայազգի դերասան Մայքլ Քանըրզը պատմում է Սարոյանի 60-ամյա գրական վաստակի մասին, ներկայացնելով նրա ձայնագրությունները, հարցազրույցները, գրական գործերն ու Կալինյանի լուսանկարները: Առաջին պլան է մղվում Ֆրեզնո քաղաքն իր անցյալով ու ներկայով, Սարոյանի արտահայտած մտքերով, գրքերով, անձնական իրերով, լուսանկարներով, Հայաստան կատարած այցերով: Ֆիլմի վերջում Սարոյանը խոսում է հայերեն: Ֆիլմն առաջին անգամ ցուցադրվել է 1991-ի ապրիլի 13-ին Ֆրեզնոյում, Սարոյանի թատրոնում: Դրանից հետո ցուցադրվել է 22 երկրում, արժանանալով 6 մրցանակի:

Պատրաստեց ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ. «ԱԶԳ»

ԺՈՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԹԱՏԵՐԱՍՐԱՀՈՒՄ ԲԵՄԱԴՐԵԼ Է «ՀՈՒԴԱ ԿՈՉԵՑՅԱԼԸ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑԸ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի թատերասրահում մարտի 31-ին Համազգային թատերասերների «Գասպար Իփեկյան» խումբը հանդես է եկել նոր բացված թատերաշրջանի իր երկրորդ ներկայացմամբ: Կլոդ-Անդրե Պյուժեի «Հուդա կոչեցյալը» երեք արարից բաղկացած ողբերգությունը բեմադրվել է Ժորժ Սարգսյանի կողմից: Ներկայացումը դիտել են մեծաթիվ թատերասերներ, որոնք հետաքրքիր են համարել հեղինակի՝ Հուդային արդարացնելու մոտեցումները:

«ԴՌԱՆ ԹԱԿՈՑ. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՎԱՐԻ ՄԻՋՈՎ» ԳԻՐՔԸ ՀԵՂԻՆԱԿԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ

Մարգարեթ Ահներտը իր «Դռան թակոց. Ճանապարհորդություն Հայոց ցեղասպանության խավարի միջով» գիրքը ապրիլի 23-ին կներկայացնի Քեմբրիջի Կառավարության եւ միջազգային ուսումնասիրությունների հարվարդյան կենտրոնում: Հեղինակի մոր պատմությունները պատուհան են բացում դեպի մարդկության պատմության սարսափելի ժամանակահատվածում հայ ժողովրդի մղած պայքարը:

Միջոցառումը կազմակերպվում է Հարվարդի հայկական ընկերության եւ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտության ազգային ասոցիացիայի համատեղ ջանքերով:

Փաստավավերագրական ֆիլմ՝ նվիրված Սարդարապատի հերոսամարտին

Կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանը նկարահանում է փաստավավերագրական ֆիլմ՝ նվիրված Սարդարապատի հերոսամարտին: Ինչպես այսօր «Արմենպրես»-ին ասել է ռեժիսորը, ֆիլմը պատրաստ կլինի մայիսի վերջերին, այժմ նա դեռ աշխատում է սցենարի վրա:

Տ.Խզմալյանը ֆիլմը նկարահանելիս օգտագործում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան արխիվներում պահպանված փաստաթղթերն ու կադրերը, սակայն հիմնական գործածվող նյութը իր իսկ կողմից հավաքված արխիվից է:

«Ֆանտաստիկ նյութեր եմ գտել, որոնք իրապես դարաշրջանը նկարագրող վավերագրեր են: Այդ բոլորը փորձելու եմ օգտագործել ֆիլմում»,- ավելացրել է նա:

սկիզբը՝ էջ 13

Մեծ հույսերի եւ մեծ ...

- Բուխարեստի գագաթնաժողովը ի՞նչ ազդեցություն կթողնի ՆԱՏՕ-ՀԱՊԿ հարաբերությունների վրա:

- ՀԱՊԿ-ն այնպիսի կազմակերպություն է, որ ընդամենը ատամներ ցույց կտա: Վրաստանի եւ Ուկրաինայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին լարվածության պիկեր կառաջացնի: Իսկ ՆԱՏՕ-ին Վրաստանի եւ Ուկրաինայի սերտաճումը անշրջելի գործընթաց է: Ռուսաստան-Արեւմուտք հարաբերությունների սրումը տարբեր դրսեւորումներ կարող է ունենալ. Եվրոպան կունենա էներգամատակարարման անվտանգության խնդիրներ, ռուս-վրացական հարաբերությունները կսրվեն:

- Խոսվում է, թե ՌԴ նորընտիր նախագահ Դմիտրի Մեդվեդեւը փոփոխության կենթարկի պետության արտաքին քաղաքականության հայեցակարգը:

- Ռուսաստանը բազմիցս է քաղաքական հայեցակարգեր փոխում: Հարկ է ասել, որ դա ձեռնտու է նաեւ Պուտինին: Նախ՝ իրավահաջորդ լինելով հանդերձ՝ Մեդվեդեւը պետք է իր ինքնությունը, ինքնատիպությունը դրսեւորի: Այսինքն՝ դա Մեդվեդեւի շահերից էլ է բխում: Ամեն դեպքում՝ Մեդվեդեւը ներքեւից աջակցություն կստանա: Սակայն կարծում եմ, որ շեշտադրումները չեն փոխվի, կփոխվի տոնայնությունը...

Գոհար Բարսամյան. «ԺԱՄԱՆԱԿ», 03.04.08

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ (5)

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

(1897-1937)

1934, 1-5 օգոստոս - Երեւանի կուլտուրայի տանը հրավիրվում է Հայաստանի գրողների առաջին համագումարը: 7-րդ նիստում, օգոստոսի 5-ի երեկոյան ելույթ է ունենում Չարենցը: Նա ընտրվում է ՀԳՄ վարչության եւ ԽՍՀՄ գրողների համագումարի պատվիրակության կազմում:

1934, օգոստոսի սկիզբ - Երեւանում Չարենցի թարգմանությամբ լույս է տեսնում Մ. Գորկու «Բանաստեղծություններ եւ լեգենդներ» գիրքը, որը նախատեսված էր խորհրդային գրողների առաջին համագումարի պատգամավորներին նվիրելու համար:

1934, 17 օգոստոսի - 1 սեպտեմբեր - Տեղի է ունենում ԽՍՀՄ գրողների առաջին համագումարը: Օգոստոսի 29-ին, համագումարի 20-րդ նիստում ելույթ է ունենում Չարենցը: Նրա ելույթը ժամանակին տպագրվել է «Հանուն սինթետիկ արվեստի» վերնագրով:

1934 - Չարենցի խմբագրությամբ լույս է տեսնում Մ. Մեծարենցի «Երկերի լիակատար ժողովածու» շքեղ հատորը:

1934 - Չարենցի խմբագրությամբ լույս են տեսնում Ջ. Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» (թարգմանիչ՝ Կարեն Միքայելյան), Ֆիրդուսու «Ռուստամ եւ Սոհրաբ» (թարգմանիչ՝ Գեւորգ Ասատուր) գրքերը: Խմբագրում է Շեքսպիրի «Արքա Լիրի» Հ. Մասեհյանի թարգմանությունը:

1934-ից - Մասնակցում է «Անթոլոգիա հայ պոեզիայի» գրքի ստեղծման աշխատանքներին: Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի եւ բրյուսովյան հրատարակության 20-ամյակի կապակցությամբ այս նոր գիրքը պիտի գար շարունակելու սկսված գործը: Գիրքը լինելու էր Բրյուսովի ժողովածուի լրացված ու վերափոխված հրատարակությունը, որի խմբագիրը պետք է լիներ Գորկին: Չարենցին հանձնարարվում է գրքի միջնադարյան եւ ժողովրդական պոեզիայի բաժնի աշխատանքների ղեկավարությունը: Սակայն նա գրքի ստեղծման աշխատանքներին բազմակողմանի մասնակցություն է բերում: «Անթոլոգիան» լույս է տեսնում 1940-ին, Մոսկվայում: Չարենցի անունը ոչ մի տեղ հիշատակված չէ:

1934, 30 դեկտեմբեր - Հանդիպում է Երեւանի պետական համալսարանի ուսանողության եւ դասախոսական կազմի հետ: Լեփ-լեցուն դահլիճում նրան դիմավորում են հոտնկայս եւ խանդավառ ծափերով: Նստելու տեղ չլինելու պատճառով հանդիսականների մի մասը խռնվում է միջանցքում: Ներածական խոսք է ասում Ս. Հարությունյանը, զեկուցում է Ռ. Զարյանը, ելույթ են ունենում Ս. Հակոբյանը եւ ԱՄՆ-ից ժամանած Պ. Սելյանը: Ասմունքով հանդես է գալիս Ա. Ոսկանյանը: Ելույթ է ունենում նաեւ Չարենցը, որին, մամուլի վկայությամբ, «դահլիճը դիմավորեց բուռն ու երկարատեւ ծափահարությամբ»:

1935, 9 հունվար - Որպես պատգամավոր մասնակցել է խորհուրդների 8-րդ համագումարին եւ ընտրվել է ՀԽՍՀ կենտգործկոմի անդամ:

1935, 25 փետրվար, 22 մարտ, 23 մարտ, 23 ապրիլ - ՀԽՍՀ ՆԳԺԿ վարչությունում հարցաքննվել է որպես ահաբեկիչ:

1935, 8 մարտ - Դիմում է գրողների միության վարչությանը եւ հայտարարում, որ այդ օրվանից «դուրս է գալիս գրողների կորպորացիայից»: Չարենցին ՀԳՄ շարքերից հեռացնելու կապակցությամբ տեղի է ունեցել երկու նիստ. մարտի 11-ին ՀԳՄ վարչության կուսակցական խմբակի, մարտի 13-ին, բանաստեղծի ծննդյան օրը, ՀԳՄ վարչության: Երկու նիստերն էլ «խստիվ դատապարտում են Չարենցի ըստ էության հակախորհրդային, հակահասարակական վերջին հայտարարությունը եւ գտնում անհրաժեշտ նրան հեռացնել Հայաստանի խորհրդային գրողների միությունից եւ վարչությունից»:

1935, 6 հունիս - վերականգնվում է Հայաստանի գրողների միության կազմում:

1935, հունիս - Մոսկվայում հանդիպում է Վիլյամ Սարոյանին: Այդ հանդիպման մասին հետագայում հիշարժան էջեր է գրել մեր մեծ հայրենակիցը, «Ես իմ անուշ հայաստանին» համարել մեր Տերունական աղոթքը՝ «Հայր մերը»:

1935, 9 հուլիս - Մոսկվայում հանդիպում է Ռոմեն Ռոլանին եւ բանակցում նրա «Ժան Քրիստոֆ» վեպը թարգմանելու մասին: Այդ կապակցությամբ 1935թ. սեպտեմբերի 30-ին նամակ է հասցեագրել Ռոլանին: Նույն թվականի հոկտեմբերի 20-ին Ռոլանը պատասխանել է. «Ուրախ եմ, իմանալով, որ իմ «Ժան Քրիստոֆը» թարգմանվելու է հայերեն»: Ռոլանի նամակը «Առաջաբանի փոխարեն» վերնագրով տպագրվում է «Ժան Քրիստոֆի» 1937-ին տպագրված 1-ին հատորում: Չարենցի անունը ոչ մի տեղ հիշատակված չէ:

1935, հուլիս - Բնակարան է ստանում Երեւան, Սունդուկյան 6 հասցեյով: Ներկայումս՝ Մաշտոցի 17, որտեղ գտնվում է բանաստեղծի տուն-թանգարանը:

1935, աշուն - Գրողների միությանը կից կազմակերպում է երկամյա երեկոյան գրական համալսարան: Մի կարճ ժամանակ Չարենցը դասավանդում է բանարվեստ եւ տաղաչափության հիմունքներ:

1935, 30 դեկտեմբեր - ՀԽՍՀ 15-ամյակի կապակցությամբ Մոսկվայում, Կրեմլում ԽՍՀՄ ղեկավարությունն ընդունում է Հայաստանի աշխատավորության պատվիրակությանը, որի կազմում գրողներից ներկա էին Ս. Զորյանը, Ն. Զարյանը եւ Վ. Անանյանը: Ստալինը Զորյանի հետ վարում է այսպիսի զրույց.

«Ստալին - Ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը:

Զորյան - Ոչինչ:

Ստալին - Նրան կարծեմ նեղացնում են:

Զորյան - Նա այժմ իրեն հրաշալի է զգում»:

Ստալինի այս վերաբերմունքից հետո Հայաստանի «Կոմունիստ» ռուսերեն թերթը 1936թ. հունվարի 20-ին տպագրում է հարցազրույց Չարենցի հետ, «Գրական թերթում» 1936թ. հունվարի 20-ին լույս է տեսնում Ալազանի «Օպերային թատրոն ունե՞ք... ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը», իսկ 1936թ. փետրվարի 12-ին՝ Ս. Հարությունյանի «Չարենցը եւ կլասիկ պոեզիան» հոդվածները:

Շարունակելի՝

«Մարտ» անունով մելամաղձոտ տրամադրությունը

Ինչպե՞ս հաղթահարել գարնանային հոգնածության ախտանիշը

Օրերը սկսում են երկարել, արեւի ճառագայթներն ավելի են ջերմացնում, եւ թվում է մարդու օրգանիզմը բնության այս երեւույթներին պետք է շատ դրական արձագանքի, բայց տեղի է ունենում հակառակը: Մարդը սկսում է տառապել հոգնածության զգացումից:

Գարնանային հոգնածության սինդրոմը տկար զգալու շատ տարածված ձեւ է: Հիմնական ախտանիշներն են՝ աշխատունակության ցածր մակարդակը, գերհոգնածությունը, ուժի անկումը, նեւրոզները, անքնությունը եւ տարբեր քրոնիկական հիվանդությունների սրացումը: Սրանց առաջացման պատճառները մասնագետների համար ակնհայտ են: Գարնանային գեղեցիկ տրամադրությունը զգալուն խանգարում են մեր շրջապատում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները: Մթնոլորտային ճնշման տատանումները, ջերմաստիճանի իջեցումն ու բարձրացումը մեր օրգանիզմում առաջացնում են մի վիճակ, որը բժիշկներն անվանում են դեսինքրոնոզ վիճակ: Հենց այդ բիոլոգիական ժամերն են կարգավորում սրտի, ստամոքսի, թոքերի ու ուղեղի աշխատանքը: Այնքան էլ հեշտ չէ այս ամենը տեղափոխել գարնանային եղանակ, հատկապես, երբ ամառային ժամերին անցնելիս մարդու քնից 1 ժամ պակասում է:

Գարնանային հոգնածության հաջորդ պատճառը հիպովիտամինոզն է՝ մեր օրգանիզմում նյութափոխանակության խթանիչ հանդիսացող վիտամինների ոչ բավարար քանակությունը: Արդեն ձմեռ անցկացրած մրգերի ու բանջարեղենների մեջ գրեթե վիտամիններ չեն մնում, իսկ այն պաշարները, որ մենք հավաքել ենք ձմեռվա համար, վաղուց արդեն օգտագործված են լինում գրիպի կամ այլ վիրուսային հիվանդությունների դեմ պայքարելու համար: Եվ, բացի այդ, գարնանը մեր օրգանիզմում նյութափոխանակության հաճախականությունը շատ ցածր տոկոս է կազմում: Այս կամ այն վիտամինի դեֆիցիտի մասին մասնագետները դատում են պացիենտի տեսքից կամ գանգատներից: Թուլությունը, գլխապտույտները, գերհոգնածությունն ու ցածր դիմադրողականությունը խոսում են վիտամին C-ի պակասի մասին (ասկորբինաթթու): Մաշկի չորությունը, խամրած մազերը, փխրուն եղունգները վիտամին A-ի պակասի խնդիր է: Վիտամին B6-ի պակասն առաջացնում է քնի խանգարում, նյարդային լարված վիճակ եւ ախորժակի կորուստ: Իսկ ահա սրտխփոցի, շնչարգելության ու մկանային թուլության պատճառ կարող է հանդիսանալ վիտամին B1-ի պակասը:

Եթե կարելի է համարել հիվանդություն, ապա այս հիվանդության ռիսկի խումբ են համարվում մեգապոլիսների բնակիչները, հատկապես տարեց մարդիկ: Այս օրերին հատկապես շատ ավելի բարդ է հղիների ու քրոնիկական հիվանդություններ (հիպերտոնիա, ստամոքսի խոց, ռեւմատիզմ, շաքարային դիաբետ, բրոնխիալ ասթմա) ունեցողների վիճակը, քանի որ եղանակի փոփոխություններն ու վիտամինների պակասը առաջին հերթին հարված են օրգանիզմի ամենաթույլ օղակի համար: Պրովոկացիոն պատճառ կարող են հանդիսանալ այն ամենը, ինչը կարող է խախտել կյանքի սովորական ընթացքը: Բավական է հուզվել, սնվելու ու քնելու կարգը խախտել, հիվանդագին պոռթկումներն անխուսափելի են:

Նման դեպքերի պրոֆիլակտիկայի եւ բուժման առաջին եւ գլխավոր պայմանը քունը կարգավորելն է: Գարնանային հոգնածության ժամանակ, գոնե 1 ժամ ավելի պետք է քնել, քան մինչեւ ամառային ժամանակի անցնելն էր, այն էլ, եթե հնարավոր է օրինակ, բաց օդանցքով: Գարնանը մաքուր օդում պետք է լինել հնարավորինս շատ, գոնե 2 ժամ: Այս եղանակին շատ ճիշտ կլինի օգտագործել վիտամինային կոմպլեքսներ, հատկապես նրանք, որոնք ավելի հարուստ բաղադրություն ունեն: Իհարկե, անպայման չէ գլխացավերից, անքնությունից, օրգանիզմի խարամներից ազատվելու եւ ուժերը վերականգնելու համար դիմել ուժեղ ազդեցություն ունեցող դեղերին: Ավելի մեծ նշանակություն ունի առողջ ապրելակերպը: Ուղղակի պրոֆիլակտիկայի համար կարելի է օրգանիզմը մաքրել խարամներից շատ պարզ ու բոլորին հասանելի միջոցներով: Ահա, օրինակ, հասարակ պրոցեդուրա կիտրոնով. 1 բաժակ տաք ջրի մեջ լցնել բաժակի 1/3-ի չափով կիտրոնի հյութ: Խմել այն առավոտյան ժամը 7-9-ն ընկած ժամանակահատվածում՝ փոքրիկ կումերով: Հետո պառկել փորի վրա եւ աջ կողատակին դնել տաք ջերմակ (չՐպսՍՈ): Այդպես պառկել 1-2 ժամ ու հետեւել, որ ջերմակը միշտ տաք լինի: Այս պրոցեդուրան կրկնել օրումեջ՝ 10 անգամ: Այդ օրերի ընթացքում կարելի է խմել անթառամից, կալենդուլայից կամ եգիպտացորենի թելիկներից պատրաստված թեյ: Կիտրոնի օգնությամբ օրգանիզմը կարելի է մաքրել լորձից: 150գր քերած ծովաբողկին ավելացնել 2-3 կիտրոնի հյութ: Այս խառնուրդն ընդունել օրը երկու անգամ, 1/2 թեյի գդալ, անոթի վիճակում: Այն օգնում է ազատվել տարբեր տեղերում հավաքված լորձից, ամենակարեւորը՝ չվնասելով լորձաթաղանթը:

Հոդերի մաքրում

5գր դափնու տերեւը 300գր ջրով 5 րոպե եռացնել, հետո 3-4 ժամ թողնել թերմոսում: Թուրմը քամել եւ կում-կում խմել 12 ժամվա ընթացքում: Ամբողջը միանգամից խմել չի կարելի, որովհետեւ հնարավոր է ստամոքսի լորձաթաղանթը վնասել: Պրոցեդուրան անել 3 օր հետո, կրկնել 1 շաբաթ հետո: Այն ազատում է հոդերն աղերից, եղանակի հետ կապված ցավերից ու հոգնածությունից:

Իսկ ահա արյունը մաքրող առաջատարի դերը պատկանում է եղինջին: Եղինջը նպաստում է արյան հեմոգլոբինի բարձրացմանը, մաքրում է օրգանիզմը խարամներից ու լավացնում ներքին օրգանների գործունեությունը: Այն աճում է հենց այն ժամանակ, երբ հալվում է ձյունը, այսինքն երբ մեր օրգանիզմը շատ վիտամինի կարիք ունի: Շատ օգտակար են եղինջից պատրաստված կերակրատեսակները:

Շատ լավ պրոֆիլակտիկ միջոցներ են բուսական ադապտոգենները թուրմերը: Սրանք կարելի է օգտագործել օրը 2-3 անգամ, ուտելուց 15-20 րոպե առաջ կամ ուտելուց 4 ժամ հետո: Վիտամինային թուրմեր ու մզվածքներ կարելի է պատրաստել տնային պայմաններում: 1 ճաշի գդալ մասուրի պտուղները լվանալ սառը ջրով, այնուհետեւ վրան լցնել 0,5 լիտր ջուր, եռացնել կափարիչը փակ ամանով 10 րոպե, ապա 1 ժամ թրմել ու քամել:

շար՝ էջ 24

Հայաստանը 6- րդն է

Շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ այսօր հրապարակված շախմատային երկրների գործակիցների վերջին ցուցակում Հայաստանը 2627 միավորով զբաղեցնում է 6-րդ տեղը:

Առաջին տեղում է Ռուսաստանը՝ 2772 միավոր, 2-րդ տեղում՝ Ուկրաինան՝ 2680, 3-րդ տեղում՝ Իսրայելը՝ 2636, 4-րդ տեղում՝ ԱՄՆ-ը՝ 2633, 5-րդ տեղում՝ Չինաստանը՝ 2628 միավորով: Ֆրանսիան 2625 միավորով 7-րդ տեղում է, Հունգարիան 2620 միավորով՝ 8-րդ տեղում, 9-րդ տեղում Հոլանդիան է՝ 2610 միավորով, եւ տասնյակը եզրափակում է 'Ադրբեջանը՝ 2609 միավորով:

Այսօր ՖԻՖԱ-ն էլ հրապարակել է կանանց ֆուտբոլի ազգային հավաքականների միջազգային գործակիցների վերջին ցուցակը, որում Հայաստանի կանանց ֆուտբոլի հավաքականը 1088 միավորով զբաղեցնում է 108-րդ տեղը:

Առաջին տեղում են ԱՄՆ-ի ֆուտբոլիստուհիները՝ 2207 միավորով, 2-րդ տեղում՝ Գերմանիայի հավաքականը՝ 2173, 3-րդ տեղում՝ Շվեդիայի հավաքականը՝ 2084 միավորով:

Լ. Արոնյանը ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակում 6-րդ տեղում է

Հայաստանցի գրոսմայստեր Լեւոն Արոնյանը զբաղեցնում է 6-րդ տեղն հրապարակված՝ ՖԻԴԵ-ի շախմատիստների գործակիցների միջազգային վերջին ցուցակում: Նա ունի 2763 միավոր: Հայաստանցի գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը՝ 2673 միավորով, Գաբրիել Սարգսյանը՝ 2643, Կարեն Ասրյանը՝ 2630, աշխարհի 100 լավագույն շախմատիստների վերջին ցուցակում զբաղեցնում են, համապատասխանաբար, 49-րդ, 77-րդ եւ 92-րդ տեղերը: Սերգեյ Մովսիսյանը՝ Սլովակիայից, 2695 միավորով 25-րդ տեղում է:

Աշխարհի առաջատար շախմատիստների տասնյակում 1-ին տեղում է Վիշվանաթան Անանդը՝ Հնդկաստան, 2803 միավոր, 2-րդ՝ Վլադիմիր Կրամնիկը՝ Ռուսաստան, 2788, 3-րդ՝ Ալեքսանդր Մորոզեւիչը, Ռուսաստան, 2744, 4-րդ՝ Վեսելին Տոպալովը՝ Բուլղարիա՝, 2767, 5-րդ՝ Մագնուս Կառլսենը՝ Նորվեգիա՝ 2765, 6-րդ՝ Լեւոն Արոնյանը՝ Հայաստան, 2763, 7-րդ՝ Շահրիյար Մամեդյարովը՝ Ադրբեջան, 2753, 8-րդ՝ Թեյմուր Ռաջաբովը՝ Ադրբեջան, 2751, 9-րդ՝ Պյոտր Սվիդլերը՝ Ռուսաստան, 2746, 10-րդ՝ Պետեր Լեկոն՝ Հունգարիա, 2741միավոր:

Արթուր Աբրահամը կրկին հաղթանակ տարավ

Հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը շաբաթ օրը Գերմանիայում հաղթանակ տարավ ամերիկացի Էլվին Այալայի նկատմամբ՝ 7-րդ անգամ պաշտպանելով IBF վարկածով աշխարհի չեմպիոնի կոչումը: Մրցամարտը 12-րդ ռաունդում ավարտվել է նոքաուտով:

IBO մրցակարգում Աբրահամը երկրորդն է ամերիկացի Քելի Պավլիկից հետո: Ամռանը Աբրահամը հանդես է գալու Նյու Յորքի հանրահայտ «Մեդիսոն Սքուեր Գարդեն» դահլիճում, սակայն առայժմ պարզ չէ, թե ով է լինելու նրա մրցակիցը: «Ցանկանում եմ հանդիպել Պավլիկի հետ», - ասել է Աբրահամը «Ասոշիեյթեդ փրես»-ին: 26 մարտերից 21-ը Աբրահամն ավարտել է նոքաուտներով:

ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԱՆԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ԳՐԱՎԵԼ Է 2-ՐԴ ՏԵՂԸ

Վահե Ջեբեդջյանը երկրորդ տեղն է գրավել Կիպրոսում անցկացված շախմատի առաջնության մինչեւ 16 տարեկանների մրցաշարում: Ինչպես հաղորդում է «Կիպրահայերը», Վահեն առաջնության միակ հայ մասնակիցն է եղել:

10-ԱՄՅԱ ԷԴՄՈՆԴ ԱՅՆԵՂՋՅԱՆԸ ԳՐԱՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԿԻՊՐՈՍԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Տասնամյա Էդմոնդ Այնեղջյանը առաջին տեղ է գրավել համակիպրոսյան թենիսի մրցաշարի մինչեւ 14 տարեկանների պայքարում: Ինչպես հաղորդում է «Կիպրահայեր»-ը, որակավորման խաղերում Էդմոնդը հաղթել է Յանիս Մավրուդիսին:

ՄԱՐԻՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ-ՍՈՄՈՒՆՋՅԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՊԻՆԳ-ՊՈՆԳԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիբանանի պինգ պոնգի ֆեդերացիան անցյալ շաբաթ Մոն լա Սալում անցկացրել է Լիբանանի պինգ պոնգի գարնանային առաջնության տղաների եւ աղջիկների մրցումները: Աղջիկներից հաղթողի կոչումը նվիճել է Հայ մարզասիրաց ընդհանուր միության (ՀՄԸՄ) Բեյրութի ներկայացուցիչ Մարիանա Սահակյան-Սոմունջյանը, որը եզրափակիչում 3-1 հաշվով պարտության է մատնել ՀՄԸՄ Բեյրութի ներկայացուցիչ մեկ այլ մարզիկի՝ Նոել Քեշիշյանին:

Բերթի Ֆոգսթը՝ Ադրբեջանի հավաքականի մարզիչ

Գերմանիայի ֆուտբոլի ազգային հավաքականի նախկին մարզիչ Բերթի Ֆոգսթը երեկ նշանակվել է Ադրբեջանի ազգային հավաքականի մարզիչ:

«Ռոյթերզ» լրատվական գործակալության փոխանցմամբ, 61-ամյա գերմանացի մասնագետը փոխարինելու է մակեդոնացի Գոյկո Հաջիեւսկուն, որի ղեկավարությամբ Ադրբեջանի թիմը Եվրոպայի 2008 թվականի առաջնության նախընտրական մրցաշարի A խմբում գրավել է վերջին տեղը: Բ. Ֆոգսթը նախկին ֆուտբոլիստ է, որպես պաշտպան խաղացել է Մյոնխենգլադբախի «Բորուսիա»-ում եւ Գերմանիայի ազգային հավաքականում: Գնդակի համար մինչեւ վերջ կատաղի պայքար մղելու ունակության համար երկրպագուները նրան տվել էին «Տերիեր» (որսաշան տեսակ) մականունը:

«Բորուսիա»-ի կազմում նա 5 անգամ դարձել է Արեւմտյան Գերմանիայի չեմպիոն, մեկ անգամ նվաճել է Գերմանիայի գավաթը եւ երկու անգամ՝ ՈՒԵՖԱ-ի գավաթը:

Շար՝ էջ 24

Ինտերնետից օգտվողների թիվը ռեկորդային է

Աշխարհում Ինտերնետից օգտվողների թիվն առաջին անգամ գերազանցել է 1 միլիարդը: Այս տվյալները բովանդակում է վերջերս տարածված «Տեղեկատվական էկոնոմիկայի մասին զեկույցը», որը կազմել է ՄԱԿ-ի առևտրի և զարգացման խորհրդաժողովը: Փաստաթղթի համաձայն, այս տարեսկզբին գլոբալ ցանց մուտք ուներ 1 մլրդ 20 մլն 610 հազար մարդ: Անցյալ տարվա համեմատությամբ այդ ցուցանիշն աճել է 19.5 տոկոսով: Ինտերնետից օգտվողների թվով երկրների առաջին «եռյակում» տեղ են գրավել ԱՄՆ-ը՝ մոտ 200 միլիոն, Չինաստանը՝ 111 միլիոն և Ճապոնիան՝ 85.29 միլիոն մարդ: Ռուսաստանում «համաշխարհային սարդոստայնից» օգտվողների թիվը 2005 թվականի վերջի դրությամբ կազ մում էր 21.8 միլիոն՝ մեկ տարվա ընթացքում ավելանալով 17.8 տոկոսով: Այդ ցուցանիշով Ռուսաստանը աշխարհում զբաղեցնում է 11-րդ տեղը և առաջին տեղը՝ Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի երկրների թվում: Ռուսաստանին հաջորդում են Ուկրաինան (4.5 մլն) և Բելառուսը (3.39 մլն):

Սաուդյան Արաբիայում բացվել է երկրում առաջին հյուրանոցը կանանց համար

Էր Ռիադում տեղի է ունեցել երկրում այն առաջին հյուրանոցի հանդիսավոր բացումը, որը նախատեսված է բացառապես կանանց համար: Այդ մասին հաղորդել է սաուդական «Ալ Վաթան» թերթը: «Օթել Լյազուան»-ը ներառում է 25 համար եւ մի քանի սրահներ խորհրդաժողովների եւ ընդունելությունների համար: Թագավորությունում գործող նորմաների համաձայն, կինը, որին չի ուղեկցում նրա խնամակալը, որը կարող է լինել ամուսինը, հայրը կամ ամուսնու կողմից ազգականներից մեկը, չի կարող կանգ առնել հյուրանոցում կամ ինքնուրույն համար պատվիրել այնտեղ:

Հյուրանոցը կառուցվել է մի շարք սաուդացի գործարար կանանց նախաձեռնությամբ եւ կոչված է հեշտացնելու գործարարությամբ զբաղվող սաուդացի կանանց կյանքն ու ուղեւորությունները երկրում: Հյուրանոցի բացման արարողությանը մասնակցած՝ Սաուդյան Արաբիայի Զբոսաշրջության բարձրագույն կոմիտեի ղեկավար արքայազն Սուլթան բեն Սալմանը հույս է հայտնել, որ շուտով նման հյուրանոցներ կհայտնվեն նաեւ երկրի այլ քաղաքներում, ինչը, անտարակույս, կնպաստի գործարար ակտիվության զարգացմանը սաուդացի կանանց շրջանում:

ԱՄՆ-ի ծովակալը պաշտոնից հեռացվել է 20 տարի առաջ տված կեղծ ցուցմունքների համար

ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի հրամանատարությունը ռազմածովային ուժերի կադրերի պետ ծովակալ Ջոն Ստաֆլեբիմին պարտականությունների կատարումից հեռացրել է այն պատճառով, որ նա կեղծ ցուցմունքներ է տվել 1990 թվականին Սպիտակ տանն աշխատելու ժամանակ ոչ կանոնադրական հարաբերությունների գործի քննության ժամանակ:

Այդ մասին լրագրողներին հաղորդել է ռազմածովային ուժերի ներկայացուցիչ Ֆրենկ Թրոպը: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչը հետաքննությունն սկսել է այն անանուն նամակից հետո, որի հեղինակը Մտաֆլեբիմին մեղադրել է ոչ կանոնադրական հարաբերությունների մեջ, երբ վերջինս 1990 թվականին աշխատում էր որպես ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ-Ավագի զինվորական օգնական: Ներկայում հետաքննության արդյունքներն ուսումնասիրում են ռազմածովային ուժերում, եւ ծովակալն իր պաշտոնից հեռացվել է մինչեւ հետաքննության եզրակացության քննարկման արդյունքները: Թե հատկապես ինչ «ոչ կանոնադրական հարաբերությունների» մասին է խոսքը, ռազմածովային ուժերը չեն ճշտում:

«PERNO RICAR»-Ը ԹՈՂԱՐԿԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՇԱՄՊԱՅՆԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Ֆրանսիական «Perno Ricar» ընկերությունը վաճառքի է հանել աշխարհում ամենաթանկ շամպայնը, որի մեկ արկղի արժեքը 50 հազար եվրո է: Մեկ արկղում կա 12 շիշ: Այսինքն, 0.75 լիտր տարողությամբ մեկ շիշ Perno Ricar ապրանքանիշի շամպայնը գնորդի համար կարժենա 4 հազար 166 եվրո:

Գնի նախորդ ռեկորդը պատկանում է LVMH ընկերությանը, որը թողարկել է սահմանափակ քանակությամբ երեք լիտրանոց «Դոնա Պերինյոնա» շամպայնը, որի մեկ շշի արժեքը եղել է 12 հազար եվրո, այսինքն մեկ լիտրի համար 4 հազար եվրո: Այսպիսով, ֆրանսիական շամպայնի էլիտար տեսակների գները վերջին շրջանում հավասարվել են ոսկյա զարդերի արժեքին: Արտադրողների հայտարարությունների համաձայն, այս էլիտար խմբաքանակը նախատեսված է գերհարուստ գնորդների համար եւ կառաջարկվի գնահատողներին սահմանափակ թվով երկրներից ԱՄՆ, Ճապոնիա, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Չինաստան, Շվեյցարիա եվ Ֆրանսիա: Սպասվում է, որ գնորդների քթիվը կլինի մոտ 100 մարդ:

Այժմ ընկերությունը վաճառքի ծավալով աշխարհում 4-րդ տեղն է զբաղեցնում 388.7 մլն շիշ: 2007 թվականի արդյունքներով արտադրության աճը կազմել է 7.3 տոկոս: Առաջին տեղը, ըստ վարկանիշի, մեծ առավելությամբ պատկանում է LVMH:

Աշխարհում մնացել է Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած 8 մարդ

Աշխարհում այժմ մնացել է ընդամենը 8 մարդ, որոնք մասնակցել են Առաջին համաշխարհային պատերազմին: «Ֆրանսպրես»-ի վկայությամբ՝ նրանք 111-ից 106 տարեկան են: Վետերաններից երեքը բրիտանացիներ են, երկուսը իտալացիներ, մնացածը՝ Միացյալ Նահանգներից, Գերմանիայից եւ Կանադայից:

1914-1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել է 74 միլիոն, զոհվել է 10 միլիոն, վիրավորվել է 20 միլիոն մարդ:

«THE WAY WE WERE» ԽՈՒՄԲԸ 1 ԱՄԻՍ ՇԱՐՈՒՆԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 6-ից մինչեւ մայիսի 6-ը «The way we were» երաժշտական անսամբլը շրջագայելու է հայտնի «Hello Ellis Island» շոուի հետ: Խումբը հանդես կգա տարբեր ներկայցումներով, նրան կուղեկցի հայկական գործիքներով նվագող մի նվագախումբ: Ներկայացման հեղինակ, պրոդյուսեր եւ ղեկավար Հուրիգ Փափազյան-Շահագյանը վերականգնել է հայկական ավանդական երգը եւ պարը, ինչպես նաեւ դասական արվեստը՝ ի դեմս Կոմիտաս Վարդապետի ստեղծագործությունների: Նա հավաքել է ցեղասպանությունից մազապուրծ եղած եւ ԱՄՆ-ում հաստատված ընտանիքներում ծնված հայերից կազմված մի թատերախումբ:

Տասնամյակներ շարունակ «The Way We Were» անսամբլը երաժշտական-թատերական ներկայացումներ է ցուցադրում ԱՄՆ-ի Արեւելյան ափի ողջ երկայնքով:

«Պեռնո Ռիկար»-ը գնեց «Աբսոլյուտ»-ը

Ալկոհոլ արտադրող ընկերությունների ֆրանսիական «Պեռնո Ռիկար» խումբը 5,63 միլիարդ եվրոյով գնել է «Աբսոլյուտ» օղին արտադրող շվեդական «Վին ընդ Սփրիթ» պետական ընկերությունը:

«Ասոշիեյթեդ փրես» գործակալության փոխանցմամբ՝ «Վին ընդ Սփրիթ»-ը աճուրդի էր դրվել Շվեդիայի կառավարության կողմից՝ պետական ընկերությունների վաճառքի ընդհանուր ծրագրի շրջանակներում: Աճուրդում երեկ հաղթող է ճանաչվել «Պեռնո Ռիկար»-ը, որի առաջարկը գերազանցել է երեք այլ ընկերությունների առաջարկները:

«Պեռնո Ռիկար»-ի կառավարիչ-տնօրեն Պիեռ Պրինգեն ասել է, թե «Աբսոլյուտ»-ի արտադրությունը կլրացնի խմբի ռազմավարությունում առկա բացը, քանի որ բարձրակարգ օղու արտադրությամբ «Պեռնո Ռիկար»-ը մինչ այժմ չի զբաղվել: «Պեռնո Ռիկար»-ի մեջ է մտնում նաեւ Երեւանի կոնյակի գործարանը, որը ֆրանսիական խումբը ձեռք է բերել 1998 թվականին՝ վճարելով շուրջ 30 միլիոն դոլար:

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՈՒ ԿՈՎԻ ՀԻԲՐԻԴ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ

Նյուքասլի համալսարանի գիտնականները ստեղծել են մարդու եւ կենդանու առաջին հիբրիդը: Ստեղծված էմբրիոնի յուրաքանչյուր բջիջ կիսով չափ պատկանում է մարդուն, կիսով չափ կովին:



BBC-ի տեղեկացմամբ, բջիջներն «ապրել են» երեք օրից ավել, սակայն օրենքի համաձայն, դրանք երկու շաբաթից ավել չպետք է «ապրեն»:

Նշենք, որ կաթոլիկ եկեղեցին փորձը «դիվական է» համարել, սակայն բժիշկները հավատացնում են, որ փորձի արդյունքները թույլ կտան մի շարք հիվանդություններ բուժել մասնավորապես փորձի շնորհիվ հնարավորություն կստեղծվի Պարկինսոնի ու Հայլգեյմերի հիվանդությունների համար բուժման նոր մեթոդներ գտնել:

ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ ԵՆ 97-ԱՄՅԱ ՖՐԱՆՍՈՒՀԻՆ ԵՎ 101-ԱՄՅԱ ԻՏԱԼԱՑԻՆ

97-ամյա ֆրանսուհին որոշել է ամուսնանալ 101-ամյա իտալացու հետ: Նրանք միմյանց հետ հանդիպում են արդեն 50 տարի: Զույգը փաստաթղթերը ներկայացրել է իտալական ՁԱԳՍ եւ սպասում է, որ հարսանեկան արարողությունը տեղի կունենա մինչեւ ամռան սկիզբ: Այսպես հաղորդում են ֆրանսիական լրատվամիջոցները:

Մինչեւ 75 տարեկանը նրանք աշխատում էին տարբեր քաղաքներում: Մադամ Սիլվի Բազանը ապրում եւ աշխատում էր Մոնակոյում, իսկ նրա ապագա ամուսինը Իտալիայում: Նման վիճակը նրանց դուրս էր գալիս եւ չէին պատրաստվում ամուսնանալ: Հասնելով պատկառելի տարիքի՝ նրանք ի վերջո որոշել են ամուսնանալ: Կինը նշել է, որ իրենք դեռ չեն որոշել արարողության ամսաթիվը, բայց ցանկանում են, որ հնարավորինս շուտ այն տեղի ունենա:

Ուշագրավ է, որ Ֆրանսիայում ներկայում ապրում է 100 եւ ավելի բարձր տարիք ունեցող 20 հազար մարդ, 1990-ից սկսած նրանց թիվը ավելացել է ավելի քան հինգ անգամ: Ֆրանսիացիների երկարակեցությունը փորձագետները պայմանավորում են բժշկության զարգացմամբ:

Վատիկանն աշխարհի ամենաբարգավաճ պետությունն է

Վատիկանն աշխարհի ամենաբարգավաճ պետությունն է, ասված է Janes Information Gruop բրիտանական տեղեկատվական ընկերության զեկույցում, որը կազմել է 2007 թվականին աշխարհի 235 երկրների կայունության ու բարգավաճման վարկանիշը:

Վարկանիշի համաձայն՝ կյանքի առավել հարմարավետ պայմաններ են ստեղծվել Եվրոպայի գաճաճ պետություններում: Պապական քաղաք-պետությունը 99 միավոր է ստացել հարյուր հնարավորից եւ առաջ անցել երկրորդ եւ երրորդ տեղերը գրաված Շվեդիայից եւ Լյուքսեմբուրգից:

Առաջին տասնյակում տեղ են գբաղեցրել նաեւ Մոնակոն, Ջիբլարթարը, Սան Մարինոն, Լիխտեյնշտեյնը, Մեծ Բրիտանիան, Հոլանդիան եւ Իռլանդիան:

Վերջին տասնյակում ընդգրկված են Սոմալին, Սուդանը, Աֆղանստանը, Կոտ դ՚Իվուարը, Հայիթին, Զիմբաբվեն, Չադը, Զաիրը եւ Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը:

Իսկ ամենաանկայուն կազմավորումներ են ճանաչվել Գազայի հատվածի եւ Հորդանան գետի արեւմտյան ափը:

Ղազախստանի նախագահը վազել է օլիմպիական ջահով

Ապրիլը 3-ին Ալմաթիի մոտ կայացած արարողության ժամանակ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հազարավոր հանդիսատեսների առջեւ խորհրդանշական կարճատեւ վազք է կատարել՝ օլիմպիական կրակը ձեռքին: Ղազախստանից սկսվում է օլիմպիական կրակի համաշխարհային ուղեւորությունը: Մինչեւ Պեկին վերադառնալը օլիմպիական ջահը կանցնի աշխարհի շուրջ 20 երկրներով:

ԺԱԿԵՏ

Ժակետը գարնանային զգեստապահարանի հիմնական իրերից է: Հարմար հագուստ է եւ հրաշալի է նայվում տարբեր երկարության փեշերի, ինչպես նաեւ դասական տաբատների ու ջինսի հետ՝ կերպարին հաղորդելով ռոմանտիկություն եւ անբռնազբոսություն: Խստաոճ ժակետն առավել տեղին կլինի գրասենյակում, ջինսից կամ փոքր-ինչ ճմռթված կտորից ժակետը՝ ոչ պաշտոնական իրադրությունում, թաշվից, կերպասից կամ փայլերով նախշակարված ժակետը՝ երեկույթում: Նորաձեւ լրացումների օգնությամբ կարելի է սովորական ժակետը ամենօրյա հագուստից վերածել ինքնատիպ եւ տոնական հանդերձի: Այդ նպատակով կարելի է օգտագործել կտորից ծաղիկների տեսքով գեղեցիկ կրծքազարդեր, տարատեսակ գոտիներ, երկար նուրբ շարֆեր:

Այս գարնանը չափազանց նորաձեւ է կարճացված ժակետը: Դիզայներներից շատերը, փորձեր անելով համաչափությունների հետ, ժակետները կարճացրել են անհավատալիության աստիճանի: Այդպիսի տեսք ունեն գործնականում ժակետների բոլոր տեսակները, այդ թվում եւ նորաձեւ ժակետթիկնոցները, ինչպես նաեւ թեթեւ կուրտկաները: Կարճացված ժակետները սազում են այսօր նորաձեւ նրբին զգեստների հետ: Կարճացված թեւքերով ժակետները նաեւ հիանալի լրացնում են զգեստը: Եթե ցանկանում եք ընդգծել ձեր բարակ գոտկատեղը, ընտրեք նստեցված կամ գոտիով ժակետ. գոտին այս գարնանն ու ամռանը նախորդ սեզոնի չափ լայն չէ:

Հիմնական գույներն են չեզոք գույները, սեւը եւ սպիտակը: Գործվածքները՝ ամառային թվիդ, «մետաղական» ծածկույթով վուշե գործվածքներ, կաշի նմանակող կտորներ:

Նորաձեւ են եւ «սաֆարի» ոճով ժակետները: Ավանդական «ճմռթվածությունը», մեղմ ուրվագիծը նոր սեզոնում գլամուրային ռետրո շքեղություն է ձեռք բերել: Ամենօրյա կուրտկաների եւ ժակետների զարդատարրերից դիզայներները նախապատվությունը տվել են չորս գրպաններին, որոնք առավել շահեկան են երեւում գոտու եւ կարճացված թեւքերի համակցությամբ: Մոդայիկ լուծումները 70-ականների ոգով են. «սաֆարի» ոճի ժակետը համակցված է շորտի կամ կլոշ տաբատների հետ:

Դիզայներները միշտ նորաձեւ սպորտային ոճն այսօր փոքր-ինչ այլ կերպ են մատուցում: Նոր սեզոնի սպորտային ոճի հիմնական բնորոշիչներն են՝ ուղիղ ուրվագծեր, նվազագույն զարդատարրեր կամ դրանց լիովին բացակայություն, ձեւերի հստակություն եւ համաչափություն, չերեւացող կոճակներ: Նորաձեւ են չեզոք, ինդիգո եւ նարնջագույն գույները:

Նորաձեւ են նաեւ «կիմոնո» ոճի՝ կլորավուն, փոքր-ինչ անձեւ ժակետները: Այս նմուշները հաճախ օձիք չեն ունենում եւ կապվում են գոտիով: Սրանցում ողջ ուշադրությունն ուղղված է թեւքերին եւ ազատ, անկաշկանդ ուրվագծերին: Հիմնական գույներն են սպիտակը, ինդիգոն, մոխրագույնն ու սեւը: Հիմնական գործվածքներն են փայլփլուն նրբադիպակը, դիպակը կամ ժակարդե գործվածքը, նուրբ կերպասը:

Ժակետները գերազանց են նայվում փեշերի հետ: Այսօր մինին դարձյալ մոդայիկ է: Անցյալ դարի 60-ականներին մինի փեշը նորաձեւ դարձրեց անգլիացի մոդելագործ Մերի Քուանթը: Այս սեզոնում մինի փեշերն ավելի նրբագեղ են, դրանց լավագույն երկարությունը ծնկից մի քիչ բարձրն է: Ինչ վերաբերում է ամառային թեթեւ փեշերին ու երեկոյան զգեստներին, նախապատվելի երկարությունը սրունքների կեսից ցածրն է: Բլուզներն այս սեզոնում խորհուրդ է տրվում դնել տաբատների եւ փեշերի տակ:

Ներկայացրեց ԱԻԴԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Արագ եւ համեղ նախաճաշ Բուլերբրոդ «Առավոտ»

Անհրաժեշտ է 4-6 կտոր բատոն հաց, 3 հատ ձու, 4 հատ նրբերշիկ, 60 գր. կարագ, 2 հատ թթու վարունգ, աղ ու կանաչի ըստ ճաշակի: Հացի կտորները տապակել կարագի մեջ: Նրբերշիկը եփել ու մանր կտրատել: Այնուհետեւ ձուն եփել ու կլոր-կլոր կտրատել: Վարունգը եւս շատ բարակ ու կլոր-կլոր կտրատել: Հետո հացի վրա քսել մնացած կարագը, ապա ձուն, վարունգը, նրբերշիկն ու կտրատած կանաչին:

Սմբուկ՝ լցոնած մածունով եւ սխտորով

Պատրաստման եղանակը: Պտղակոթից մաքրած սմբուկը խորովել շիկացած ածուխի վրա, կլպել եւ դնել տաքացրած ձեթով կաթսայի մեջ: Սմբուկի վրա լցնել կիտրոնահյութ, աղ եւ տապակել բոլոր կողմերից: Կծու բիբարը սխտորի հետ աղալ մսաղացով, վրան աղ լցնել եւ խառնել մինչեւ միատարր զանգված դառնա: Տապակած սմբուկը դնել ափսեի մեջ, վրան լցնել պղպեղով ու սխտորով պատրաստված զանգվածը (հարած մածունով) եւ սառեցնել: Մատուցելուց առաջ ձեւավորել կրակի վրա խորոված եւ կլպած կանաչ պղպեղով, կանաչու տերեւներով:

Պարունակություն: 120 գ. սմբուկի համար վերցնել 30 գ. ձեթ, 20 գ. կծու կանաչ պղպեղ, 2 հատ քաղցր կանաչ պղպեղ, 2 գ. սխտոր, 10 գ. կիտրոն, 50 գ. մածուն, աղ, կանաչի ըստ ճաշակի:

ԹԱԳԱՎՈՐԸ, ԱՂՔԱՏՆ ՈՒ ՕՁԸ

Ասում են մի գիշեր Արեւելքի թագավորը էրազ ա տեսնում, որ երկնքիցը գելեր են թափվում: Զարհուրած վեր ա թռչում տեղից, չի իմանում, թե ո՞նց հասկանա էս էրազը: Հրաման ա տալիս, թե ով էս էրազը մեկնի, բացատրի, նրան հարիր ոսկի կտամ:

Մի աղքատ մարդ էդ որ լսում ա, բերնի ջուրը գնում ա: Արտումը աշխատանք ա անում, ամա ուշք ու միտքը էն հարիր ոսկին ա:

Մին էլ տեսնում ա հրես իր բնիցը դուրս էկավ մի օձ, ասավ. «Մարդ-ախպեր, որ թագավորի էրազի միտքը քեզ ասեմ, հարիր ոսկին որ առնես, կբերես ինձ հետ կկիսե՞ս:

- Հա,- ասում ա աղքատը,- դու ասա՝ ես կկիսեմ:

- Գնա,- ասում ա օձը,- թագավորին ասա, որ նազիր-վեզիրները, փաշա-փուշեքը, մեծամեծները գել ու գազան դառած աշխարքը կերան, աղքատ ու չքավորներին հալից գցեցին: Ժողովուրդը մեղք ա, մինչեւ էդ մեծամեծ-ների գյամը չքաշի, կարգի չբերի, աշխարքը չի խաղաղվի:

Աղքատը գնում ա թագավորի մոտ, նրա էրազը մեկնում, հարիր ոսկին ստանում, ետ գալի, ամա էնպիսի ճամփով, որ օձին չպատահի, նրա փայը չտա:

Անց ա կենում մի առ ժամանակ: Էս թագավորը հիմի էլ էրազում տեսնում ա, որ երկնքից աղվեսներ են թափվում: Կանչում ա աղքատին, թե բա չես ասիլ էսենց, էսենց էրազ եմ տեսել, որ էս էրազի միտքը չկարենաս հասկանալ գլուխդ կտրիլ կտամ:

Աղքատը մնում ա էրկու կրակի մեջտեղը, թե էրազը չկարենա բացատրի՝ գլուխը կկտրվի, օձի մոտ էլ սեւերես ա մնացել: Չի իմանում ի՞նչ անի: Մին էլ տեսնում ա օձը սողաց, մոտեցավ ասեց.

- Գնա, ասա թագավորին, որ էս տարին ստի ու խաբեության տարի ա: Ուշքդ վրեդ պահի, աչքդ՝ բաց: Չհավատաս ոչ կնկանդ, ոչ որդկերանցդ, ոչ բարեկամներիդ ու ազգականներիդ:

Աղքատը գալիս ա թագավորի էրազը բացատրում, հարիր ոսկին ստանում գալիս ա տուն, էլ ետ օձի փայը չի տալիս:

Էս թագավորը վրա իրեք անգամն էլ ա էրազ տեսնում, հիմի էլ երկնքիցը գառներ են թափվում: Աղքատին կանչում են, որ թագավորի էրազը հասկանամեկնի: Աղքատը ժամանակ ա խնդրում, գնում ա օձի մոտ ասում.

- Ես արել եմ, դու մի անի, իմ էրեսը քու առաջ սեւ ա, էրկու անգամ քեզ խաբել եմ՝ էլ չեմ խաբի: Թագավորը էս տեսակ էրազ ա տեսել: Սրա միտքը ինձ հասկացրու՝ գնամ թագավորին ասեմ, թե գլուխս կտրիլ կտա, էրեխեքս կմնան անտեր անտիրական:

Օձը սովորացնում ա, մարդը գնում ա ու ասում.

- Գելերին որ ջարդես, աղվեսներին բնաջինջ անես, գառան պես կապրեն մարդիկ, էլ դարդ ու ցավ չեն ունենա:

Աղքատը շատ ոսկի ա ստանում, բերում ա դնում օձի առաջին թե՝

- Վեկալ, ինչքան քեֆդ տա:

Օձը ծիծաղում ա, ասում.

- Մարդ ախպեր, էն անգամ, որ իմ փայ ոսկին չտվիր, աշխարհի տերը գելերն էին, դու էլ նրանց նման իմ փայը կերար: Աղվեսի աշխարհում, աղվեսի պես ինձ խաբեցիր, հիմի գառան ժամանակը դու էլ ես գառ դառել: Էդ նրանից ա, որ մարդ արարածի մեջը գելն էլ կա, աղվեսն էլ ու գառն էլ կա: Ոսկին որ բերել ես ինձ համար, ես ի՞նչ անեմ: Տար, քու դարդերին դարման արա, ամա աշխատի, որ քու միջի գելն ու աղվեսը սատկեն ու միշտ գառը մնա կենդանի:

ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին,
կարմիր վարդին
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ. - Քեզ կպոկեմ,
Այ կարմիր վարդ, դաշտի միջին:
Վարդը ասավ. - Տես, կծակեմ,
Որ չմոռանաս փշոտ վարդին:

Փշոտ վարդին,
կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկե?ց վարդը դաշտի միջին.
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին:
Քնքուշ վարդին,
կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Յոհան Վոլֆգանգ Գյոթե

ՌԵՆՈՒԱՐ. «ՊԱՐԱՀԱՆԴԵՍ ՄՈՒԼԵՆ ԴԵ ԼԱ ԳԱԼԵՏՈՒՄ»

«Նա միակ մեծ նկարիչն է, ով իր կյանքի ընթացքում ոչ մի տխուր նկար չի ստեղծել»,- 1913թ. գրել է Ռենուարի մասին Օկտավ Միրաբոն: «Պարահանդես Մուլեն դե լա Գալետում» կտավը գեղանկարչի «խնդուն» արվեստի ամենավառ օրինակն է: Կտավի սյուժեն Ռենուարը գտել է հենց իր տան կողքին՝ Կորտո փողոցում, «Մուլեն դե լա Գալետ» համանուն ռեստորանում, որն իր անունը ստացել էր այստեղ մատուցվող համեղ գալետներից: Մոնմարտրն աստիճանաբար շրջապատվում էր բնակելի թաղամասերով: Ոմն մսյո Դեբրե ռեստորանի էր վերածել Մոնմարտրի բլրի գագաթին պահպանված վերջին հողմաղացներից մեկը: Պարադահլիճը «զետեղված» էր վառ կանաչ ներկված փայտաշեն կցակառույցում: Լավ եղանակին պարողները դուրս էին գալիս բակ, որտեղ շրջանաձեւ դասավորված էին նստարաններն ու սեղանները: Շաբաթ եւ կիրակի երեկոները «Մուլեն դե լա Գալետում» պարելու էին հավաքվում խանութների գործակատարները, դերձակները, երիտասարդ նկարիչները, դերասաններն ու զվարճասեր աղջիկները Մոնմարտրից: Ռենուարը սիրում էր պանդոկի ուրախ եւ անկաշկանդ միջավայրը: Այս մթնոլորտը ոգեշնչում էր նրան, այստեղ նա անում է իր առաջին ուրվանկարները, որոնք հիմք են ծառայում լույսով հագեցած նշանավոր «Պարահանդես Մուլեն դե լա Գալետում» կտավի համար: Պլեներում նկարելու համար մեծ կտավը նա այգի է տանում, որտեղ լույսը, ակացիաների տերեւների միջով թափանցելով, գետնին ու պարողների հագուստներին երկնագույն ու վարդագույն փայլքեր էր սփռում: Որպեսզի կերպարներն ավելի իրական լինեին, նկարչի ընկերներից շատերը կեցվածք են ընդունել այս մեծ կոմպոզիցիայի համար: Սեղանի շուրջ նստած են Ռենուարի երեք ընկերները՝ Ֆրան-Լամին, Գենետը եւ Ժորժ Ռիվյերան: Ձախի զույգը իսպանացի գեղանկարիչ Դոն Պեդրո դե Վիդալ դե Սոլարես ի Կարդենասն ու Մարգարիտա Լեգրանն է: Պարողների մեջ կարելի է ճանաչել գեղանկարիչ Անրի Ժերվեին, լրագրող Պոլ Լոտին, գեղանկարիչ Ֆրեդերիկ Կորդեին: Կենտրոնում՝ առջեւի պլանում, երկու քույրերն են՝ Էսթելն ու Ժանանն, որոնց Ռենուարը գտել էր Մոնմարտրում:

Կտավի զարմանալի նորությունը դիպուկ է բնորոշել Ժորժ Ռիվյերը՝ նկարչի ընկերն ու կենսագիրը. «Մինչ Ռենուարը ոչ մեկի մտքով չէր անցել կտավի վրա փոխանցել առօրյա կյանքի այսքան նշանակալի չափերի հատված. սա խիզախ արարք է, որը կպարգեւատրվի արժանի հաջողությամբ»: Սակայն թշնամական հարձակումներ էլ եղան: Քննադատները, հիանալով նկարի կոմպոզիցիայով, միաժամանակ, այլանդակություն էին համարել պարող մարդկանց պատկերելու ձեւը՝ նմանեցնելով նրանց «ամպրոպի ժամանակ երկինքը ծածկող բաց մանուշակագույն ամպի»:

Սակայն կանցնեն տարիներ, եւ Գուստավ Ժեֆրուան՝ իմպրեսիոնիզմի առավել խորաթափանց պաշտպանը, ամենահիացական գովեստը կշռայլի նկարի հասցեին. «Պարահանդես Մուլեն դե լա Գալետում» կտավը անմիջական դիտման եւ մթնոլորտի հաղորդման համար լույսն օգտագործելու վրա հիմնված ամենահաջողված ստեղծագործություններից մեկն է. դրանում արտացոլված են եւ պարով արբեցումը, եւ աղմուկը, եւ արեւի լույսը, եւ բաց օդում պարողների բարձրացրած փոշին, եւ դեմքերի գրգռվածությունը, նվաղուն կեցվածքները, եւ զգեստների ռիթմիկ շրջապտույտը՝ վարդագույն, բաց կապույտ, մուգ կապույտ, սեւ, եւ կրքի պոռթկումը, անսպասելի տխրությունը, անակնկալ մոլեգնությունը, հաճույքն ու խոնջանքը...»:

Ռենուարի այս կտավը աշխարհի ամենաթանկ նկարների տասնյակում է:

Իռլանդիայի վարչապետը հայտարարել է իր հրաժարականի մասին

Իռլանդիայի վարչապետ Բերտի Ահերնն ապրիլի 3-ին հայտարարել է, որ մայիսի սկզբին հրաժարական է տալու՝ իր անձնական ֆինանսական հարցերի հետ կապված սկանդալի պատճառով:

Ահերնի նկատմամբ ճնշումներ են սկսվել, երբ հայտնաբերվել է, որ նրա հաշվին 150 հազար դոլար գումար կա, որը չի ձեւակերպված որեւէ փաստաթղթով:

Ահերնը հերքել է մեղադրանքը, բայց ասել է, թե չի ցանկանում, որ իր հետ կապված սկանդալը շեղի կառավարության ուշադրությունը:

Ահերնի 11-ամյա պաշտոնավարության ընթացքում Իռլանդիան աննախադեպ բարգավաճում է ապրել տնտեսական վերելքի արդյունքում:

SUPERMARKET MASIS

Արեւելյան եւ Լիբանանյան խոհանոց
Լիբանանյան անուշեղեն եւ թխվածք
Լահմաջո, մանաիշ, ֆալաֆել եւ հարյուրավոր
այլ արտադրություններ
հասցե՝ MENANԴՈՍ 24, ԱԹՈՆԱ.
(Օմոնիա հրապարակի մոտ)
հեռ.: 210 5202659-210 4915474
ԲԱՑ Է ՇԱԲԱԹՎԱ ԲՈԼՈՐ ՕՐԵՐԻՆ
ՄԻՆՉԵՎ ԿԵՍ ԳԻՇԵՐ

ՇԱԲԱԹՎԱ ԹԻՎԸ

** Լոնդոնի նավթի սակարանը երկուշաբթի օրը փակվել է բառելի դիմաց 100,10 դոլար գնով: Այստեղ օրվա ընթացքում գնի անկումը կազմել է 3,67 դոլար: Լոնդոնում գործառնությունների ավարտվելու պահին Նյու Յորքի ապրանքային սակարանում բառելն նավթն արժեր 101,5 դոլար կամ 4,12 դոլարով պակաս, քան աճուրդների սկսվելու պահին:*

սկիզբը՝ էջ 17

«Մարտ» անունով մելամաղձոտ ...

Ստացված թուրմին ըստ ճաշակի կարելի է ավելացնել մեղր, շաքար կամ ինչ-որ հատապտուղային օշարակ: Խորհուրդ է տրվում խմել երեխաներին ու մեծերին կես բաժակից օրը 3 անգամ, ուտելուց առաջ: Վիտամինի պակասի դեպքում շատ օգտակար է բուժական թեյը պատրաստված հավասար քանակությամբ հետեւյալ բույսերից՝ դաղձ ուրց, սուսամբար, արեւքուրիկ, ծաղկած կամ չհասած մորու պտուղներ, սովորական արոսի՝ սնձի պտուղներ, սեւ հաղարջ եւ գետնամորի: Այն պետք է խմել 1 բաժակից օրը 3 անգամ: Մասնագետները գտնում են, որ տարվա այս եղանակին պետք է շատ ուտել սովորական կաղամբ: Հատուկ թթուների շնորհիվ այն ամենալավն է կարգավորում նյութափոխանակության խանգարումը: Շատ օգտակար են նաեւ սոխն ու սխտորը: Բանջարեղենն ավելի լավ է ուտել հում վիճակում, որովհետեւ եփած վիճակում դրանք կորցնում են իրենց օգտակարության մոտավորապես 70-80 տոկոսը: Իսկ ահա խնձորի վիտամինները պահելու համար ավելի լավ է դնել ջեռոցում:

Վիտամիններ պետք է ընդունեն նրանք, ովքեր շատ քիչ են օգտագործում միրգ ու բանջարեղեն, ծխում կամ շատ են օգտագործում ալկոհոլ, անցել են 50 կգ-ի շեմը, շատ դիետաներ են փորձել, հաճախակի են դիմում այս կամ այն դեղամիջոցի օգնությանը, հաճախ սթրեսի մեջ են ընկնում, կերակրող մայրերն ու, վերջապես, մարդիկ, որ ապրում են մեծ քաղաքներում:

Քարեր փարբեր խոռոչներում

Այն մարդիկ, ովքեր անընդհատ օգտագործում են պոլիվիտամիններ, մեծացնում են իրենց օրգանիզմում քարերի առաջանալու վտանգը: Որպեսզի խուսափենք այս վտանգից, գիտնականները խորհուրդ են տալիս. 5-7 օր վիտամիններ ընդունելուց հետո 2-3 օր ավելացնել օգտագործվող հեղուկի քանակը հասցնելով մինչեւ 2 լիտրի՝ մի մասով պատրաստելով միզամուղ թուրմեր: Հետո 5-7 օր հանգիստ թողնել՝ առանց վիտամինների ու հեղուկի ավելորդ քանակության: Սա կրկնել 3-4 անգամ՝երիկամները լվանալու նպատակով:

Սուսաննա ԱՂԱՏՅԱՆ. «168 ԺԱՄ»

սկիզբը՝ էջ 18

Բերթի Ֆոգսթը՝ Ադրբեջանի ...

1974 թվականին Ֆոգսթը Արեւմտյան Գերմանիայի ազգային հավաքականի կազմում արժանացել է աշխարհի չեմպիոնի տիտղոսին: 1979 թվականից սկսել է աշխատել որպես մարզիչ տարբեր թիմերում, ապա՝ հավաքականում:

Բերթի Ֆոգսթի ղեկավարությամբ Գերմանիայի ազգային հավաքականը 1996 թվականին նվաճել է Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: 1998 թվականին Ֆրանսիայում անցկացված աշխարհի առաջնությունում Գերմանիայի թույլ ելույթից հետո նա հեռացել է հավաքականից:

Ֆոգսթը մարզել է Քուվեյթի եւ Շոտլանդիայի թիմերը: Վերջին շրջանում մարզել է Նիգերիայի ազգային հավաքականը, սակայն այս տարվա փետրվարին հրաժարական է ներկայացրել, երբ Նիգերիայի թիմը Աֆրիկայի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչում պարտվել է Գանայի թիմին:

Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի խոսնակը հայտնել է, որ Բերթի Ֆոգսթը այս շաբաթ կստորագրի ազգային հավաքականի ղեկավարումը երկու տարով ստանձնելու պայմանագիր:

ՄԻ ՔԱՆԻ ՏՈՂՈՎ

- ԱՄՆ հայկական համագումարի եւ Մեծ Բոստոնի Համայնքային հարաբերությունների հրեական խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվել է «Խավարից դուրս» պարային բեմադրությունը՝ նվիրված 1915թ. Հայոց ցեղասպանության տարելիցին:
- «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն այս տարի նախատեսում է հանրապետությունում իրականացնել 31,2 մլրդ դրամի աշխատանքներ, որից 21.71 մլրդ դրամը կուղղվի գազափոխադրման համակարգի վերակառուցմանը եւ ընդլայնմանը, 9,5 մլրդ դրամը՝ գազաբաշխման համակարգում աշխատանքների իրականացմանը:
- Թուրքիայում ձերբակալվել է 45 մարդ՝ «Ալ Քաեդա» ահաբեկչական ցանցի հետ կապեր ունենալու կասկածով:
- Ռուսաստանի վարչապետի պաշտոնում Վլադիմիր Պուտինի թեկնածությունը Պետդուման կարող է հաստատել մայիսի 8-ին՝ արտահերթ նիստում:
- Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը փակելու պահանջով դատական հայցի բավարարումից հետո, ԱԶԿ առաջ երեք այլընտրանք կա՝ սահմանադրական փոփոխության համար ընդդիմության հետ համաձայնություն, հանրաքվեի գնալու պայմանով սահմանադրական փոփոխություն, կամ էլ՝ բարձրագույն դատարանում պաշտպանվելու կարողություն:
- «Փոթիի ծովային նավահանգիստ» բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսը, ինչպես նաեւ նավահանգստին հարող հողամասերը՝ 3 միլիոն քմ մակերեսով, կվաճառվեն «RAK Investment Autority» ընկերությանը (Արաբական Միացյալ Էմիրություններ):
- Եթե Թել Ավիվը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, Բաքուն կմեղադրի Իսրայելին պաղեստինցիների ցեղասպանության մեջ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱՐԺԵՔ՝ ԴՐԱՄԻ ԴԻՄԱՑ

USD	1	308.31
EUR	1	484.45
GBP	1	616.84

EURO/USD	1.5733

"ΧΑΪΑΣΤΑΝ" ("ΑΡΜΕΝΙΑ"), ΚΥΚΛΟΦΟΡΕΙ ΚΑΘΕ ΣΑΒΒΑΤΟ
ΕΚΔΟΣΗ ΤΟΥ ΚΟΙΝΩΝΙΚΟΥ ΠΟΛΙΤΙΣΤΙΚΟΥ ΚΕΝΤΡΟΥ "ΑΡΜΕΝΙΑ". ΣΟΥΛΙΕ 12, 11745, ΝΕΟΣ ΚΟΣΜΟΣ, ΑΘΗΝΑ
ΕΚΔΟΤΗΣ ΝΤΕΙΒΙΝΤ ΕΙΒΑΖΙΑΝ. ΤΗΛ. 210 9359982. E.MAIL. hayastan@otenet.gr- hayastankentron@yahoo.com

"HAYASTAN" ("ARMENIA"), APPEARS EVERY SATURDAY
A PUBLICATION OF THE SOCIAL & CULTURAL CENTER "ARMENIA". Address: SULIE 12, 11745, NEOS KOSMOS, ATHENS, GREECE
Tel. +30 210 - 9359982, E.Mail: hayastan@otenet.gr. hayastankrntron@yahoo.com